ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հնագույն շրջանից մինչև մեր օրերը)

Ուսումնական ձեռնարկ

*Լրամշակված վերահրատարակություն*

«ՃԱՐՏԱՐԱԳԵՏ»
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941 (479.25) (07)
ԳՄԴ 63.3 (2Հ) ց 7
Ս 259

Երաշխավորված է վերահրատարակման
ՀՊՃՀ ԳԽ 24.12.2003թ. նիստում

Ս 259 Սարգսյան Ա., Հակոբյան Ա.
Հայոց պատմություն (Հնագույն շրջանից մինչև մեր օրերը): Ուսումնական ձեռնարկ/ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան. Եր. ՃԱՐՏԱՐԱԳԵՏ, 2004: 352 էջ:

Ձեռնարկում հակիրճ ու հանրամատչելի ներկայացված է հայ ժողովրդի համակարգված պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Առանձնապես հանգամանալից է տրված XX դարի պատմությունը:

Լրամշակված ձեռնարկը օգտակար կարող է լինել նաև բուհերի դիմորդներին, ուսուցիչներին, հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջաններին:

81160

Պատասխանատու խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

պատմ. գիտ. թեկն., դոցենտ Պ.Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

EU 0002795

Խմբագիր և վերստուգող սրբագրիչ՝ Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս $\frac{0503020913}{0139(01)2004}$ 2004

ԳՄԴ 63.3 (2Հ) ց 7

© Սարգսյան Ա., 2004թ.
© Հակոբյան Ա., 2004թ.
© Հ Պ Ճ Հ 2004թ.

ISBN 99941-923-1-0

# Խոսք ընթերցողին

Վերջին մեկուկես տասնամյակում մեր կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները նոր խնդիրներ են դրել նաև պատմաբանների առջև: Երբեմնի գաղափարաքաղաքական կաշկանդումներից ու շերտանստվածքներից ձերբազատումը այժմ հնարավորություն ու կենսական անհրաժեշտություն է առաջացրել անաչառ շարադրելու յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի մոտիկ և հեռավոր անցյալի պատմությունը: Այդպիսի քայլեր ձեռնարկվում են նաև հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման ուղղությամբ: Արդեն հրապարակի վրա են հայոց պատմության, հիմնականում նոր պահանջներով գրված, դասագրքեր և ձեռնարկներ: Ներկայումս զգացվում է հանրամատչելի և համառոտ շարադրված հայոց պատմության միհատորյակի անհրաժեշտությունը: Այդ նպատակով է գրված սույն աշխատությունը:

Գրքում տրված է հայ ժողովրդի ամփոփ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ հաշվի առնելով ներկա ժամանակաշրջանի

պատմագիտական պահանջները: Մասնավորապես, XIX-XX դարերի պատմությունը շարադրված է նորովի և համեմատաբար հանգամանալի:

Ինքնին հասկանալի է, որ նման փոքրածավալ գրքում հնարավոր չէ ընդգրկել հայ ժողովրդի բազմադարյան հարուստ պատմությունն իր բոլոր դրվագներով ու մանրամասներով: Աշխատությունը ինչ-որ տեղ հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցողի համար կարող է տեղեկատուի դեր ծառայել, հարստացնել նրա գիտելիքները աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին:

Սա գրքի հերթական՝ բարելավված ու թարմացված հրատարակությունն է:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԸ

**Հայկական լեռնաշխարհը, սահմանակից երկրները, լեռները և լեռնաշղթաները**

Պատմաաշխարհագրական այն տարածքը, ուր անհիշելի ժամանակներից ապրել է հայ ժողովուրդը, իր լեռնային կառուցվածքի պատճառով անվանվում է Հայկական լեռնաշխարհ (բարձրավանդակ): Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի բնօրրանն է: Այն սահմանակից էր արևմուտքում՝ Անատոլիական (Փոքրասիական) բարձրավանդակին, հարավում՝ Ասորիքին ու Միջագետքին, հարավ-արևելքում՝ Իրանական սարահարթին, իսկ հյուսիսում՝ Կուր գետի հովտին (Վրաստանին ու Աղվանքին):

Հայկական բարձրավանդակը, որն ավելի բարձր դիրք է գրավում հարևան երկրների նկատմամբ, ընդարձակ լեռնային մի զանգված է, որի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1500-1800 մետր: Հայկական լեռնաշխարհը կազմված է հրաբխային ապարներից և գտնվում է սեյսմիկ երկրաշարժային ակտիվ գոտում: Դրա ամենաթարմ և հիշարժան փաստերից է 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը:

Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում բարձրանում է գեղատեսիլ Մասիսը կամ Արարատը՝ իր մեծ ու փոքր գագաթներով: Մեծ Մասիսի բարձրությունը հասնում է 5165 մետրի: Ավանդության համաձայն, Արարատ լեռան գագաթին է հանգրվանել Նոյի տապանը: Լեռնաշխարհի հայտնի լեռնագագաթներից են Արագածը, Սիփանը, Նեմրութը, Թոնդրակը, Կապուտջուղը: Տարբեր ուղղություններով ձգվում

են բազմաթիվ լեռնաշղթաներ: Դրանցից, օրինակ, հիշարժան է Հայկական պար լեռնաշղթան, որը սկիզբ է առնում Փոքր ու Մեծ Մասիսներից և ձգվելով դեպի արևմուտք՝ ավարտվում է Եփրատ գետի հովտում: Հայկական պարը Հայաստանը բաժանում է երկու՝ հյուսիսային և հարավային մասերի: Լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասում ընկած են Բարձր Հայքի լեռները: Հայտնի են նաև Հայկական Տավրոս, Փոքր Կովկաս լեռնահամակարգերը և այլն:

### Գետերն ու լճերը, դաշտերը և կլիման

Հայկական լեռնաշխարհը հարուստ է գետերով ու լճերով, որոնք սնվում են ձնհալքից գոյացող ջրերից, անձրևներից ու սառնորակ աղբյուրներից: Հայոց լեռներից են սկիզբ առնում Առաջավոր Ասիայի խոշոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Կուրը, Արաքսը և Ճորոխը: Եփրատը Հայկական լեռնաշխարհով հոսող ամենաերկար գետն է, ունի 2700 կմ երկարություն, որից 500 կմ անցնում է բուն լեռնաշխարհով: Եփրատն ունի երկու գետաբազուկ՝ Արևմտյան Եփրատ, որը սկիզբ է առնում Էրզրումի սարահարթից, և Արևելյան Եփրատ կամ Արածանի (Մուրադ), որը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից: Երկու Եփրատներն իրար են միանում պատմական Ծոփք նահանգի Խարբերդի դաշտում և շարունակելով հետագա հոսքը Ասորիքով (Սիրիա) ու Միջագետքով՝ թափվում Պարսից ծոցը: Հայ ժողովրդի պատմական ճակատագրում առանձնապես մեծ նշանակություն է ունեցել Արաքս (Երասխ) գետը, որին ժողովուրդը անվանել է «Մայր Արաքս»: Արաքսը հոսում է հիմնականում Արարատյան դաշտով, որը Հայկական լեռնաշխարհի ամենաընդարձակ ու բարեբեր հարթավայրն է: Այն ընկած է Մասիս և Արագած լեռների միջև: Արարատյան դաշտն իր արգավանդ հողերով և ռազմավարական նշանակությամբ դարեր շարունակ եղել է Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի կենտրոնը: Եվ պատահական չէ, որ այդտեղ են կառուցվել հայոց մայրաքաղաքների մեծագույն մասը՝ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը, Երևանը: Պատմական Հայաստանի նշանավոր դաշտերից են նաև Շիրակը, Տարոնը (Մուշը), Բասենը, Խարբերդը, Ալաշկերտը: Արագած լեռան ստորոտից դեպի արևմուտք ձգվում է Շիրակի դաշտը: Այստեղ է գտնվել պատմական Հայաստանի նշանավոր Անի մայրաքաղաքը:

Պատմական Հայաստանի բնաշխարհի անզուգական զարդերն են

բազում մեծ ու փոքր լճերը: Իրենց մեծությամբ ու նշանակությամբ դրանցից առանձնանում են Վանա լիճը (Բզնունյաց ծով), Սևանա լիճը (Գեղարքունի կամ Գեղամա ծով) և Ուրմիա լիճը (Կապուտան ծով): Սևանա լիճը համարվում է աշխարհի լեռնային ամենամեծ ու ամենաբարձր լճերից մեկն է, որի բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է շուրջ 2000 մետրի: Նրանից է սկիզբ առնում Հրազդան (Զանգու) գետը: Լճի հյուսիսարևմտյան մասում գտնվում է Սևանա կղզին, որը ջրի մակարդակի իջեցման հետևանքով դարձել է թերակղզի: Լիճն ունի քաղցրահամ ջուր և հայտնի է իշխան ձկնատեսակով:

Վանա լիճը շուրջ երեք անգամ մեծ է Սևանա լճից, ունի աղի ջուր և հայտնի է տառեխ կոչվող ձկնատեսակով: Լճում կան մի շարք կղզիներ, որոնցից նշանավոր են՝ Լիմը, Կտուցը, Առտերը ու հատկապես միջնադարյան հուշարձաններով հարուստ Աղթամարը:

Ուրմիա լիճը Հայկական լեռնաշխարհի ամենախոշոր, բայց և ամենածանծաղ լիճն է: Այն գտնվում է լեռնաշխարհի հարավարևելյան սահմանագլխին: Լճի ջուրը խիստ աղի է, այդ իսկ պատճառով զուրկ է կենդանական աշխարհից:

Հայաստանը գտնվում է բարեխառն գոտում, ուր կլիման ցամաքային է, և ունի ջերմաստիճանի մեծ տատանումներ. ձմեռը բավականին ցուրտ է, իսկ ամառը՝ շոգ ու չոր:

**Բուսական և կենդանական աշխարհը, օգտակար հանածոները**

Հայաստանի բնաշխարհը հարուստ է զանազան բույսերով ու կենդանիներով: Երկրամասի առանձին շրջաններ անտառածածկ են: Հիշենք, որ Հայաստանը համարվում է հացահատիկի մշակության հնագույն հայրենիքը և երկրագործության բնօրրաներից մեկը: Հնուց ի վեր Հայաստանը հայտնի էր իր խաղողով, ծիրանով, դեղձով, կեռասով և այլն: Ծիրանը համարվել է զուտ հայկական պտուղ, և արևին տվող նրա դեղին գույնը հայ ժողովրդի ազգային խորհրդանիշներից մեկն է:

Հարուստ ու բազմազան է Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը վայրի և ընտանի կենդանիներով: Ընտանի կենդանիներից տարածված են խոշոր և մանր եղջրավոր անասնատեսակները, ինչը ինքնին ցույց է տալիս, որ լեռնաշխարհի բնակիչները վաղնջական ժամանակներից երկրագործությունից զատ զբաղվել են նաև

անասնապահությամբ: Հնուց ի վեր Հայաստանում տարածված է եղել ձիաբուծությունը: Հայկական սքանչելի ձիերն ունեցել են ոչ միայն տնտեսական, այլև ռազմական նշանակություն:

Հայաստանի ընդերքը հարուստ է ամենաբազմազան հանքային հանածոներով, Դ. Մենդելեևի պարբերական համակարգի մետաղական և ոչ մետաղական շատ ու շատ տարրերով: Դեռ վաղ ժամանակներից հայտնի են եղել պղինձը, երկաթը, կապարը, արծաթը, ոսկին, աղը, շինարարական քարերը, հանքային բուժիչ ջրերը և այլն: Ապացուցված է, որ Հայաստանը եղել է մետաղագործության հնագույն օրրաններից մեկը:

**Աշխարհագրական գործոնի դերը**

Այս կամ այն ժողովրդի կյանքում որոշակի դեր են խաղացել աշխարհագրական գործոնը, լեռնաաշխարհագրական պայմանները, ռելիեֆը, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, բնական հարստությունները և այլն: Աշխարհագրական պայմանների դերը հատկապես վճռորոշ է եղել հին ժամանակներում: Հայաստանի լեռնային բարդ կառուցվածքը (բարձրաբերձ, անմատչելի լեռներ, անտառապատ լանջեր, խորունկ ձորեր ու հովիտներ, անանցանելի գետեր, կիրճեր և այլն) հայ ժողովրդի պատմական ճակատագրում խաղացել է երկակի դեր. մի կողմից այն դարերի ընթացքում օտար նվաճողների և այլ բռնացողների դեմ ունեցել է բնական պատնեշի ինքնապաշտպանական նշանակություն (հիշենք հայ ֆիդայիների պայքարը), իսկ մյուս կողմից՝ դժվարացրել է հայոց կենտրոնացված ու միասնական պետության հարատևման գործընթացը: Հայաստանի կլիման անպայմանորեն ազդել է ժողովրդի բնավորության, նկարագրի և ազգային խառնվածքի առանձին հատկանիշների վրա, իսկ բուսական, կենդանական աշխարհը, օգտակար հանածոները՝ մարդկանց զբաղմունքի վրա և այլն:

Իր աշխարհագրական դիրքով Հայաստանն ընկած է հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք տանող առևտրական ճանապարհների խաչմերուկում: Արևելքի երկրները Եվրոպայի հետ կապող հայտնի «մետաքսի ճանապարհը» անցել է նաև Հայաստանով: Այս հանգամանքը, մի կողմից, նպաստել է Հայաստանում առևտրական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացմանը, համաշխարհային քաղաքակրթության արժեքներին հաղորդակից լինելուն, մյուս կողմից՝ դարերի ընթացքում այդ նույն ճանապարհներով հայ ժողովուր-

ղը պարբերաբար ենթարկվել է Արևելքի և Արևմուտքի բազմապիսի նվաճողների, ավարառու և քոչվոր ցեղերի ասպատակություններին ու ավեր-կոտորածներին:

Հայաստան աշխարհը, գտնվելով Եվրոպա և Ասիա մայրցամաքների սահմանագլխին, դարերի ընթացքում մի տեսակ կապող օղակ է հանդիսացել եվրոպական և ասիական քաղաքակրթությունների միջև: Հայաստանը նման դեր է կատարել, օրինակ, Հռոմի և Իրանի, Բյուզանդիայի և Արաբական խալիֆաթի, իսկ ավելի ուշ՝ եվրոպական երկրների և մահմեդական Արևելքի միջև՝ միաժամանակ կռվախնձոր լինելով դրանց միջև: Սակայն այդ նույն հոլովույթում հայ ժողովուրդը ստեղծել է իր սեփական, ինքնատիպ մշակույթը, որը, իրավամբ, արժանի տեղ է զբաղեցնում համաշխարհային քաղաքակրթության մեջ:

**Վարչատարածքային բաժանումը: Մեծ Հայքը ըստ «Աշխարհացույցի»**

Հայ ժողովրդի պատմաքաղաքական կյանքը ընթացել է պատմականորեն ձևավորված երեք հիմնական վարչատարածքային միավորներում՝ Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Կիլիկիայում: Այս երեքից բուն հայկական պատմական տարածքը կազմում է Մեծ Հայքը: Մեր նկարագրած Հայկական լեռնաշխարհն էլ հիմնականում համընկնում է Մեծ Հայք պատմաաշխարհագրական հասկացությանը: Մեծ Հայքը զբաղեցրել է ավելի քան 300 հազ. քառ. կմ տարածք: Մինչդեռ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, պատմական դառը ճակատագրի բերումով, զբաղեցնում է ընդամենը շուրջ 30 հազ. քառ. կմ, այսինքն՝ պատմական Հայաստանի տարածքի ընդամենը 1/10-ը:

Ըստ VII դարի գիտնական Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի», Մեծ Հայքը բաղկացած էր 15 նահանգներից («աշխարհներից»), որոնց կազմում հաշվվում էր շուրջ 200 գավառ:

Այդ աշխարհներն էին՝ Տայքը, Բարձր Հայքը կամ Կարինի աշխարհը, Ծոփքը կամ Չորրորդ Հայքը, Աղձնիքը, Կորճայքը կամ Կորդվաց աշխարհը, Մոկքը, Պարսկահայքը, Փայտակարանը, Սյունիքը, Արցախը, Ուտիքը, Գուգարքը, Տուրուբերանը, Վասպուրականը և Այրարատը:

Փոքր Հայքը գտնվում էր Փոքր Ասիա թերակղզու հյուսիսարևելյան հատվածում՝ Գայլ, Հալիս, Եփրատ և Ճորոխ գետերի վերին հոսանքների հովիտներում: Մոտ 200 տարի՝ մ.թ.ա. IV-II դարերում, գոյություն է ունեցել Փոքր Հայքի հայկական ազգային պետականություն:

Կիլիկիան ընկած է Փոքր Ասիայի հարավ-արևելքում՝ Միջերկրական ծովի ափին, Հայկական լեռնաշխարհի հարևանությամբ: Միջնադարում այնտեղ շուրջ երեք հարյուրամյակ (XI-XIV դարերում) գոյություն է ունեցել Կիլիկիայի հայկական պետությունը:

## ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

# ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ԴԱՐԵՐ

### Գլուխ առաջին

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### (Հնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. VI դար)

### 1. Հայաստանը նախնադարում

**Նախնադարյան կարգերը**

Մարդկային հասարակության ապրած հնագույն ժամանակաշրջանը ընդունված է անվանել նախնադարյան կարգերի շրջան: Գիտնականները պարզել են, որ պատմական Հայաստանի տարածքը համաշխարհային քաղաքակրթության սակավաթիվ օրրաններից մեկն է եղել, և այստեղ մարդը երևան է եկել ավելի քան մեկ միլիոն տարի առաջ չորրորդական ժամանակաշրջանում:

Սկզբում մարդիկ ապրել են հոտերով կամ հորդաներով, երբ կարգավորված չեն եղել մարդկային հարաբերությունները: Գոյություն են ունեցել խառն ամուսնություն, մայրիշխանություն: Հետագայում առաջացել է նախնադարյան տոհմը, որի հիմքում ընկած էր արնակցական կապը, իսկ ավելի ուշ տոհմացեղային միությունը:

**Նախնադարյան հասարակության պատմության պարբերացումը**

Նախնադարյան հասարակության պատմությունը բաժանվում է հին քարի դարի (պալեոլիթ, որ հունարեն նշանակում է «հին քար»), նոր քարի դարի (նեոլիթ կամ «նոր քար»), պղնձի-քարի դարի (էնեոլիթ), բրոնզի և երկաթի դարերի: Նման բաժանում կատարելիս հաշվի է առնվել տվյալ ժամանակաշրջանում զենքեր ու աշխատանքային գործիքներ պատրաստելու համար գոր-

ծածվող հիմնական նյութը՝ քարը, պղինձը, երկաթը և այլն:

Հայաստանում հին քարի դարը տևել է 600-800 հազար տարուց ավելի: Նախնադարյան մարդու բնակության վայրեր (կայաններ) են հայտնաբերվել Արտին լեռան լանջերին Սատանի դար կոչվող վայրում (Թալինի շրջան), Արզնի-Նուռնուս, Ֆանտան գյուղերի շրջակայքում, Հրազդանի կիրճում, Կարսում, Մալաթիայում և այլ կայաններում: Դրանցում հայտնաբերված քարե գործիքների ու զենքերի տարիքը հասնում է մոտ 800 հազար տարվա: Հին քարի դարում մարդիկ որսում էին կենդանիներ, ձուկ, հավաքում պտուղներ, օգտվում բնության պարգևած բարիքներից, օգտագործում էին բնական և արհեստական եղանակներով ստացված կրակը, բնակվում քարայրներում, կիրճերում և անտառներում:

Հին քարի դարին հաջորդում է նոր քարի դարը (նեոլիթը), որը սկսվել է մեզանից շուրջ 10 հազար տարի առաջ և տևել մոտ 4-5 հազար տարի: Նեոլիթյան բնակավայրեր են հայտնաբերվել Թալինի և Նոյեմբերյանի շրջաններում, Արարատյան դաշտում և այլուր: Դրանցում գտնված քարե, փայտե և ոսկրե իրերը (դանակ, կացին, մուրճ, իլիկ, խեցեղեն, զենք և այլն) ավելի հղկված ու կատարելագործված են: Այս շրջանում էլ սկսվում է նետ ու աղեղի գործածությունը, կենդանիների ընտելացումը, երկրագործությունը: Աստիճանաբար մայրիշխանությունից անցում է կատարվում դեպի հայրիշխանություն: Ձևավորվում է ժամանակակից բանական մարդը: Առաջանում է պաշտամունքի երևույթը: Սկիզբ է առնում խեցեգործությունը: Բազմանում է բնակչությունը: Ձևավորվում է ընտանիքը: Արյունակից տոհմերը միավորվելով ստեղծում են ցեղեր: Առաջ են գալիս ցեղային լեզուներ:

Այսպիսով, եթե նախկինում մարդն ապրում էր հավաքչության և որսորդության միջոցով, ապա այժմ սնունդն արտադրում էր ինքը. աճեցնում էր հացահատիկ, խաղող, մրգեր, բանջարեղեն, բազմացնում կենդանիներ: Դրանով իսկ մարդը յուրացնող տնտեսությունից անցում է կատարում արտադրող տնտեսության:

Հայաստանի ընդերքի մետաղի հարուստ պաշարները պայմանավորեցին մետաղամշակության վաղ զարգացումը: Պղնձի մշակումով սկիզբ է դրվում պղնձի-քարի դարի (էնեոլիթ) ժամանակաշրջանին, որը տևել է VI-IV հազարամյակները (մ.թ.ա.): էնեոլիթյան բնակավայրեր կան Շենգավիթում, էջմիածնում, Կոտայքում, Վանում, Կարինում, Բագրևանդի շրջանում և այլուր:

Պղնձի-քարի դարը շատ երկար չի տևել, որովհետև, պղնձի փափուկ լինելու պատճառով դրանից պատրաստված զենքերն ու գոր-

ծիքները շուտ էին շարքից դուրս գալիս: Այդ պատճառով նպատակահարմար է դառնում պղինձը համաձուլել անագի հետ և ստանալ ավելի ամուր ու դիմացկուն մետաղ՝ բրոնզ: Այդպիսի մետաղաձուլարան է գտնվել, օրինակ, Մեծամորում, որը աշխարհում հայտնի հնագույն արհեստանոցներից մեկն է: Մ.թ.ա. III հազարամյակում էնեոլիթին փոխարինելու է գալիս բրոնզի դարը, որը տևում է մինչև II հազարամյակի վերջը (մ.թ.ա. XI-X դարերը): Բրոնզեդարյան տիպիկ բնակավայրեր են Լճաշենի հնավայրը՝ Սևանա լճի ափին, Մոխրաբլուրը էջմիածնի մոտ, Վանաձորի դամբարանադաշտը և այլն:

Բրոնզի դարում ավելի են առաջադիմում երկրագործությունը, արհեստագործությունը: Պատրաստվում են բրոնզյա երկրագործական գործիքներ, այդ թվում՝ արոր: Զարգանում են դարբնությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, զինագործությունը, խեցեգործությունը և այլն: Մարդիկ անտաշ մեծ քարերից կառուցել են, այսպես կոչված, կիկլոպյան ամրոցներ, «վիշապներ», լեռներում հայտնաբերվել են ժայռապատկերներ՝ կենդանիների ուրվապատկերներով և որսի տեսարաններով: Արդեն բրոնզի դարում Հայկական լեռնաշխարհում կազմավորվեցին մի քանի հզոր ցեղային միություններ կամ պետական կազմավորումներ՝ Հայասա, Արմե, Նաիրի, էթիունի և այլն:

### Նախնադարյան կարգերի քայքայումը

Մ.թ.ա. II հազարամյակի վերջերին և I հազարամյակի սկզբներին բրոնզի դարն իր տեղը զիջում է երկաթի դարին: Բրոնզի փոխարինումը ավելի կարծր մետաղով՝ երկաթով, առաջ է բերում հեղաշրջում արտադրության ոլորտում: Բուռն վերելք են ապրում տնտեսությունը և ռազմական գործը: Եթե պալեոլիթում և նեոլիթում մարդիկ հազիվ էին կարողանում սնունդ հայթայթել, ապա բրոնզի ու հատկապես՝ երկաթի դարում, արտադրողական ուժերի զարգացման հետևանքով, առաջանում է նյութական բարիքների ավելցուկ, որը սկսում է կենտրոնանալ տոհմի ավագանու, ավելի ուժեղ մարդկանց՝ ձեռքին: Քայքայվում են տոհմատիրական կարգերը, հանդես է գալիս սեփականությունը, տեղի է ունենում մարդկանց ունեցվածքային շերտավորում: Այս շրջանում ցեղերի և ցեղային միությունների տնտեսական և էթնիկական միավորման ու ձուլման ճանապարհով ավարտվում է ժողովրդի ձևավորումը, հանդես են գալիս պետական կազմավորումներ:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում քայքայվում է հարյուր-հա-

զարավոր տարիներ տևած նախնադարյան հասարակությունը, և մ.թ.ա. II-I հազարամյակներում սկիզբ են դրվում դասակարգային հասարակությանը և պետությանը:

## 2. Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերն ու ցեղային միությունները: Հայ ժողովրդի կազմավորումը

**Հայերը՝ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներ**

Հայ ժողովրդի պատմության ամենաստվերոտ և վիճելի հանգամանքներից են հայ ժողովրդի էթնոգենեզի (ցեղասերման) ու կազմավորման հիմնահարցերը: Ցավոք, հայերն իրենց ծագման ու կազմավորման մասին պատմական լիարժեք տեղեկություններ չեն պահպանել: Այդպիսիք չկան նաև օտար սկզբնաղբյուրներում: Հայ ժողովրդին հասակակից հարևան հնագույն ժողովուրդներից շատերը՝ շումերներ, աքքադացիներ (քաղդեացիներ), խեթեր, խուռիմիտացիներ և այլն, վաղուց հեռացել են պատմության ասպարեզից, ուստի չեն պահպանվել զուգահեռ և բավարար պատմական գրավոր, բանավոր ու նյութական ապացույցներ հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ: Սակայն վերջին 3-4 տասնամյակներում գիտության նորագույն տվյալները որոշակի լույս սփռեցին այդ կարևորագույն հիմնահարցի պարզաբանման վրա:

Հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներն են: Հայերի՝ Հայկական լեռնաշխարհում բնիկ լինելը հաստատվում են լեզվաբանական, հնագիտական, մարդաբանական, նյութական մշակույթի նորահայտ նյութերով և այլ տվյալներով: Ամեն մի ժողովրդի կազմավորման գործում կարևորագույն դեր ունի լեզուն: Ժողովուրդների լեզուները, ըստ լեզվական կառուցվածքի և բառամթերքի, պայմանականորեն բաժանվում են լեզվաընտանիքների: Այդպիսի լեզվաընտանիքներից են՝ հնդեվրոպականը, սեմականը, թուրքականը, չինականը, ուգրաֆիննականը և այլն: Աշխարհի խոշոր լեզվաընտանիքներից է հնդեվրոպականը, որի մեջ մտնող լեզուներով խոսող ժողովուրդները զբաղեցնում են աշխարհագրական շատ մեծ տարածք՝ Հնդկաստանից մինչև Եվրոպա: Դրա համար էլ այդ լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդները պայմանականորեն անվանվում են հնդեվրոպական: 1837 թ. գերմանացի լեզվաբան Հ. Պետերմանն առաջին անգամ ապացուցեց, որ հայերենը ևս պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին: Տվյալ լեզվաընտանիքի նախամայր ցեղի զբաղեցրած տարածքի (նախա-

հայրենիքի) ճիշտ որոշումով կարելի է պարզել այդ լեզվաընտանիքին պատկանող այս կամ այն ժողովրդի կազմավորման գործընթացը:

Գիտության նորագույն տվյալներով (Օ. Շիրոկով, Վ. Իվանով, Թ. Գամկրելիձե և ուրիշներ) հիմնավորվում է, որ հնդեվրոպացիների մայր ժողովրդի նախահայրենիքը նոր քարի դարում գտնվել է ոչ թե Հնդկաստանում կամ Եվրոպայում, ինչպես կարծում էին նախկինում, այլ Առաջավոր Ասիայում՝ ընդգրկելով նաև Հայկական լեռնաշխարհը: Գանգաբանական հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ Փոքր Ասիայի, Հյուսիսային Միջագետքի և Հարավային Անդրկովկասի հնագույն ժողովուրդներն ունեցել են միևնույն մարդաբանական հատկանիշները: Մ.թ.ա. մոտ VI-IV հազարամյակների ընթացքում տեղի է ունեցել հնդեվրոպական նախամայր ժողովրդի լեզվի տրոհումը: Հնդեվրոպական նախամայր ցեղի ներսում տրոհման ճանապարհով ինքնուրույն էթնիկական միավորները (ցեղերն ու ցեղախմբերը), կազմելով ինքնուրույն լեզու (լեզվաճյուղ), աստիճանաբար հեռացել ու տարածվել են տարբեր ուղղություններով՝ դեպի Եվրոպա և Հնդկաստան: Իսկ հայկական լեզվաճյուղին պատկանող ցեղերը մնացել են տեղում և որպես ժողովուրդ ձևավորվել իրենց իսկ զբաղեցրած հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում: Դրա հավաստի վկայությունն են լեռնաշխարհում տարածված ցեղային տեղանունները, որոնք ստուգաբանվում են հայերեն կամ հնդեվրոպական այլ լեզուներով: Օրինակ, հայ-հնդեվրոպական ծագում ունեն «Մեծ Հայք», «Փոքր Հայք», «Բարձր Հայք», «Ծոփք», «Անգեղտուն», «Հարք», «Կամախ», «Եկեղյաց» և այլ տեղանունները: Ուշագրավն այն է, որ հայերենով են բացատրվում առանձնապես Հայաստանի արևմտյան հատվածի տեղանունները, որն ինքնին ցույց է տալիս, որ հայկական ցեղերը սկզբում ապրել են Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում: Այդ նշանակում է, որ հերքվում է Հայկական լեռնաշխարհում հայերի եկվոր լինելու մասին վարկածը: Պատահական չէ, որ Հայկական լեռնաշխարհի բնիկները պատկանում են «արմենոիդ» կոչվող մարդաբանական տիպին:

**Հայ ժողովրդի կազմավորման գործընթացը: Հայկական ցեղային միությունները՝ Հայասա, Արմե-Շուպրիա, Նաիրի**

Ինչպես ամեն մի ժողովրդի, այնպես էլ հայ ժողովրդի կազմավորման գործընթացը ընդգրկել է տևական ժամանակ, գուցե հազարամյակներ: Հնդեվրոպացիների մայր լեզուն կրող ցեղից անջատված հայկական ցեղերը տնտեսական և քաղաքական գործոնների ազդեցությամբ համախմբվել և որպես ժողովուրդ կազմա-

վորվել են, ըստ երևույթին, մ.թ.ա. III-II հազարամյակներում: Դասկանալի է, որ հայ ժողովուրդը կազմավորվել է ոչ միայն զուտ հայկական ցեղերից, այլ նաև բազմաթիվ օտար, ոչ ազգակից ցեղերի ու ցեղախմբերի միաձուլումից, ինչը հատուկ է նաև աշխարհի մյուս ժողովուրդներին: Սակայն անվիճելի է, որ հայ ժողովրդի կազմավորման էթնիկա-լեզվական հիմքը կամ միջուկը եղել են «Դայ» և «Արմեն» հայկական ազգակից ցեղախմբերը:

Դայ ժողովրդի ծագման ու կազմավորման վերաբերյալ մեզ են հասել հայկական, հունական և վրացական առասպելախառն ավանդություններ: Դրանցից ամենաարժեքավորն ու գնահատելին, իհարկե, պատմահայր Մովսես Խորենացու «Դայոց պատմությունից» մեզ հասած «Դայկ և Բել» ավանդապատումն է, որի հիմքում, անշուշտ, ընկած են ճշմարտության հատիկներ: Մ. Խորենացին մեզ տեղեկացնում է, որ հայերի նախահայր Դայկ Նահապետը (որը միաժամանակ և նրանց գլխավոր աստվածն էր) Թորգոմի որդին էր՝ Նոյի սերնդից: Նա գեղարվեստորեն պատկերում է երկու հսկաների՝ Դայկի և Տիտանյան Բելի հակադրությունը և ապա կռիվը: Այդ կռվում հայերի առաջնորդ Դայկը հաղթում է Բելին, որից հետո նրա սերունդը տարածվում է Դայկական լեռնաշխարհով մեկ, և երկիրը նրա անունով կոչվում է Դայք (Դայաստան):

Սկսած III հազարամյակից՝ օտար աղբյուրներում հիշատակություններ կան հայկական ցեղերի և ցեղային միությունների մասին: Մ.թ.ա. XXIII դարում Միջագետքում գտնվող Աքքադական պետության թագավոր Նարամ-Սինի թողած արձանագրություններում մի քանի անգամ հիշատակվում են դեպի հյուսիս՝ Արմանի (նաև՝ Արմանում) երկրի վրա կատարած նրա արշավանքների մասին, երկիր, որը, դատելով ըստ ամենայնի, Դայաստանն է: Դատկանշական է, որ աքքադացիները «արմանում» են անվանել նաև ծիրանը, զուտ հայկական համարվող այդ միրգը, որով այնքան հարուստ էր Արմանում (Արմենիա) երկիրը: Կարծիք կա նաև, որ այդ երկիրը գտնվել է Ասորիքում և կապ չունի Դայաստանի հետ:

Մ.թ.ա. II հազարամյակում Դայկական լեռնաշխարհի ցեղային միություններից կենտրոնական դեր է կատարել Դայասան, որը և հայ ժողովրդի էթնիկական ձևավորման գլխավոր ատաղձներից մեկն է: Դայասա կամ Դայասա-Ազզի ցեղային միության (թագավորության) մասին տեղեկություններ են տալիս խեթական արձանագրությունները (մ.թ.ա. XIV-XIII դդ.): Այդ արձանագրություններում Դայասան հիշվում է որպես թագավորություն, իշխանություն: Դայասայի կենտրոնը

եղել է Կումախան, հետագայում՝ Անի-Կամախը Եփրատ գետի ափին: Ուշագրավ է, որ հնում Անի-Կամախը եղել է հայերի հեթանոսական կենտրոնը: Այստեղ է գտնվել նաև հայ արքաների ու մեծատունների պանթեոնը (գերեզմանատունը):

Հայասան գտնվում էր Բարձր Հայքի տարածքում՝ Սև ծովից հարավ, Եփրատ գետի վերին հոսանքի ավազանում և դեպի հարավ մինչև հայկական ներքին Տավրոս: Նրան հարևան էին արևմուտքում՝ խեթական Խաթթի, իսկ հարավում՝ խուռիական Միտաննի թագավորությունները: Խեթական թագավորները հաճախակի բախվել են Հայասայի հետ: Հայասայի բնակիչները եղել են հայերը, իսկ նրանց լեզուն՝ նախահայերենը: Ըստ ամենայնի, «հայ» և «Հայաստան» (Հայք) անվանումները ծագում են «Հայասա»-ից: «Հայասա»-ի «հայ»-ը արմատն է, իսկ «ասա»-ն վերջածանցը, որը խեթերեն նշանակում է՝ հայերի ապրած երկիր՝ Հայք, Հայաստան:

Այսպիսով, Հայասան եղել է հայ ժողովրդի կազմավորման միջուկը և նրա հայրենի երկրի Հայք (հետագայում՝ Հայաստան) ձևով ինքնանվանման հիմքը: «Հայ» անունը ծագում է այս ցեղի անվանումից: Հայասաները հայ ժողովրդի նախնիներն են եղել:

Կան նաև առանձին հետազոտողներ, որոնք Հայ և Հայք բառերի ծագումը բացատրում են փոքրասիական «Հաթ» կամ «Խաթ» կոչվող ցեղի անունով:

Հայկական մյուս հայտնի ցեղերը եղել են «Արմե-Արիմները», որոնք երկրորդ հազարամյակի վերջերին և առաջին հազարամյակի սկզբներին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքից շարժվում են հարավ և հաստատվում են Շուպրիա երկրում (Վանա լճից արևմուտք՝ Աղձնիքի նահանգում) և IX դարում ստեղծում Արմե-Շուպրիա հզոր ցեղային միությունը (պետական կազմավորումը): «Արմե» կամ «Ուրմե»-ից էլ սկիզբ են առել «Արմենի», «Արմինա», «Արմենիա» անունները, ինչպես հայերին և նրանց երկիրն անվանում են օտարները: «Արմենի»-ի «նի» մասնիկը խուռի-ուրարտական ծագում ունի և հայերենի «ք» կամ պարսկերենի «ստան» մասնիկի նման մատնանշում է տվյալ ցեղի կամ ժողովրդի բնակության վայրը: Մեզ հասած հավաստի տվյալներով, առաջին անգամ Հայաստանը «Արմենիա» ձևով հիշատակված է պարսկական Դարեհ I արքայի թողած Բեհիսթունյան հռչակավոր արձանագրության մեջ (VI դ. մ.թ.ա.): Դարձյալ ըստ ավանդության, «Արմեն», «Արմենիա» անվանումների ծագումը կապվում է Հայոց Արամ թագավորի (Հայկի սերնդից) անվան հետ, որով, իբրև, մեզ ու մեր երկիրը անվանել են օտար ազգերը: Արա-

րատյան դաշտում և նրանից հյուսիս Սևանա լճի ավազանում տարածվում էր էթիունի ցեղային միությունը: Այս միության մեջ մտնում էին բազմաթիվ ցեղեր: էթիունի մշակույթի մասին են պատմում Լճաշենի դամբարանների հնագիտական նյութերը: Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում գտնվում էր Դայա ցեղային միությունը, որից էլ առաջացել է հայկական Տայք նահանգի անվանումը:

Հայկական ցեղերի ու ցեղային միությունների մասին, սկսած մ.թ.ա. XIV դարից, տեղեկություններ են հաղորդում ասսուրական արձանագրությունները: Ասորեստանի Թիկուլտի-Նինուրտա, Սալմանասար, Թիգլաթ-պալասար, Ասուրնասիպալ և ուրիշ թագավորներ հիշատակում են «Նաիրի երկրի» մասին, որ նշանակել է գետերի ու լճերի երկիր: Այդ նույն երկիրը հիշատակել են նաև «Ուրուատրի-Ուրարտու» ձևով: Ասորեստանի գահակալների կատարած ավարառություններից երևում է, որ Նաիրյան ցեղերը ունեցել են զարգացած և հարուստ տնտեսություն:

Այսպիսով, մ.թ.ա. XIV-IX դդ. ասորական աղբյուրներում «Նաիրի» ձևով անվանվող երկիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայաստանը:

Վանա լճի ավազանում և հարավարևմտյան մասում ապրող հայկական, ինչպես և ոչ հայկական այդ բազմաթիվ ցեղային միությունները ընդհանուր թվով 40-60, Ասորեստանի և այլ օտար հարձակումներից պաշտպանվելու նպատակով կազմել են դաշնակցային միություն, որը հետագայում ստանալով նոր որակ, վերաճում է պետական միավորումների: Դրանցից ամենահզորն ու ամենահայտնին դարձավ Վանի թագավորությունը:

## 3. Վանի (Արարատյան) թագավորությունը (մ.թ.ա. IX-VI դդ.)

**Թագավորության կազմավորումն ու հզորացումը**

Մ.թ.ա. IX դարում Հայկական լեռնաշխարհում Վանա լճի ավազանում, հանդես է գալիս Նաիրի-Բիայնիլի կամ Վանի թագավորությունը: Այդ պետությունն ասորեստանցիներն անվանել են Ուրուատրի-Ուրարտու: Աստվածաշնչում այն անվանվում է Արարատյան թագավորություն: Ոմանք գտնում են, որ «Ուրարտու» բառը պարզապես «Արարատ» անվանման աղավաղված ձևն է: Թագավորությունը անվանվել է նաև Բիայնա պետությունը կազմավորող Բիայնիլի կոչվող գլխավոր ցեղախմբի անունով:

Իհարկե, չի կարելի անվերապահորեն ասել, թե Վանի կամ Ուրարտական կոչվող թագավորությունը զուտ հայկական (համահայկական) պետություն էր: Գիտական տվյալները հավաստում են, որ այդ պետության (թագավորության) մեջ հայերի հետ միասին նկատելի ղեկավար դիրք ու կշիռ են ունեցել նաև խուռիական կոչվող (ոչ հնդեվրոպական) ցեղերը, ոչ հայալեզու այլ ցեղեր ու ցեղախմբեր: Եթե թագավորության առաջին փուլում ավելի ազդեցիկ ու գերակշիռ էին խուռիները, ապա երկրորդ փուլում՝ հայերը: Տեսակետ կա, որ հայ ժողովրդի կազմավորումը, սկսվելով II հազարամյակից, ավարտվել է հենց այս թագավորության ժամանակաշրջանում (IX-VI դդ. մ.թ.ա.):

Բայց սրան հակառակ զարգացվում է նաև մի այլ հայեցակետ այն մասին, որ խուռիական համարվող ուրարտացի ցեղերը և ցեղախմբերը ոչ այլ ինչ են, եթե ոչ հայախոս հայեր, միայն նրանց գրավոր, պաշտոնական լեզուն, որը մեզ է հասել արձանագրությունների ձևով, եղել է պարզապես նոր խուռիերենը: Ասվածից հետևում է, որ այլ լեզուներով Հայաստան երկրին տրված Նաիրի-Ուրարտու-Արարատ անվանումները արտահայտել են սոսկ աշխարհագրական իմաստ, վերաբերել են Հայկական լեռնաշխարհին, նրանում ապրող հայկական ու ոչ հայկական ցեղերին և պետական կազմավորումներին:

Վանի (Արարատյան) թագավորության հիմնադիրն է Արամե կամ Արամ թագավորը (860-843 թթ. մ.թ.ա.): Թագավորությունը, որն սկզբում ընդգրկում էր Վանա լճի շրջակայքը, հաջորդ թագավորների օրոք ընդլայնվում է: Այն ընդարձակվում ու հզորանում է հետագա արքաների՝ Սարդուրի I-ի, Իշպուինի, Մենուայի ու հատկապես Արգիշտի I-ի օրոք՝ իր մեջ ներառելով գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը:

Սարդուրը մայրաքաղաք է դարձնում Տուշպան՝ Վան քաղաքը: Մենուա արքան (810-786 թթ.) Վանի մոտ կառուցել է տալիս 72 կմ երկարությամբ «Շամիրամի ջրանցքը», որն, ի դեպ, գործում է մինչև օրս: Հյուսիսում Մենուան հասնում է Արաքսի հովիտը և ափի մոտ կառուցում Մենուախինիլի քաղաքը:

Մենուայի որդի Արգիշտի թագավորը, ընդարձակելով իր տերության սահմանները, մուտք է գործում Այրարատ և մ.թ.ա. 782 թ. հիմնում էրեբունին (Երևանը), իսկ մ.թ.ա. 776 կամ 774 թ. Արգիշտիխինիլի (Արմավիր) քաղաք-ամրոցները: Հիշենք, որ մ.թ.ա. 782 թ. համարվում է ներկայիս ՀՀ քաղաքամայր Երևանի հիմնադրման տարեթիվը, ինչի վերաբերյալ Արգիշտի արքան թողել է համապատասխան սեպագիր արձանագրություն: Նա միաժամանակ հարավում հաջողությամբ

մարտնչում էր ահեղ ախոյան Ասորեստանի դեմ: Արգիշտի I-ի ժամանակ (786-764 թթ. մ.թ.ա.) Վանի թագավորությունը հասնում է իր հզորության գագաթնակետին: Թագավորն իր գահակալության տարիներին իրականացրել է 14 խոշոր արշավանքներ, որոնց մասին տեղեկացնում է Վանի մոտ թողած 400 տողանոց հսկա արձանագրությունը: Այդ արշավանքների հետևանքով նա ընդարձակում է թագավորության սահմանները՝ ներառելով գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը:

**Թագավորության թուլացումը և անկումը**

Սկսած Արգիշտի I-ի հաջորդներ Սարդուր II-ից (764-735 թթ. մ.թ.ա.) և Ռուսա I-ից (735-714 թթ. մ.թ.ա.) Վանի թագավորությունը աստիճանաբար կորցնում է իր քաղաքական հզորությունն ու թուլանում: Մ.թ.ա. VIII դարի վերջերից Հյուսիսային Կովկասից Հայկական լեռնաշխարհ են ներխուժում կիմմերական, իսկ VII դարում սկյութական քոչվոր ռազմատենչ ցեղերը, որոնք մեծ հարված են հասցնում Վանի թագավորությանը: Առանձին երկրամասեր մասնատվելով, ինչպես, օրինակ, Արմե-Շուպրիան, դուրս են գալիս թագավորության ենթակայությունից:

Սակայն Բիայնիլի-Վանի պետության գլխավոր ախոյանը շարունակում էր մնալ Ասորեստանը, որը VIII դարի վերջերից կարճատև հզորացում ապրեց: Մ.թ.ա. 714 թ. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը իր բանակով թափանցում է Բիայնիլի երկրի խորքերը և կողոպտում գլխավոր աստծո՝ Խալդի տաճարը, որը գտնվում էր Մուսասիր (Մուծածիր) քաղաքում: Ռուսա արքան, լուր ստանալով Մուսասիրի տաճարի գրավման ու կողոպտման մասին, ինքնասպան է լինում:

Արդեն VII դ. վերջերին, տևական արշավանքների ու հակամարտությունների հետևանքով, խիստ թուլանում են ինչպես Բիայնիլի-Վանի թագավորությունը, այնպես էլ Ասորեստանը: Այդ նույն ժամանակ Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում հզորանում է հնդեվրոպական ցեղերից կազմված մարական պետությունը՝ Մարաստանը կամ Մեդիան՝ էքբատան (հետագայում Համադան) կենտրոնով, իսկ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում՝ Արմե-Շուպրիա երկրում, սկսում է հզորանալ Հայկ նահապետի սերունդներից Հայկազունների արքայատոհմը՝ հանձին Սկայորդու և նրա որդի Պարույրի: Մ.թ.ա. 612 թ. Պարույրը դաշնակցելով Մարաստանի և Նոր Բաբելոնի (քաղդեական) թագավորների հետ՝ մասնակցում է Ասորեստանի հռչակավոր մայրաքաղաք Նինվեի կործանմանը: Այդ հաղթանակից հետո Պարույր Նահապետը (մ.թ.ա. 609 թ.) ճանաչվում է

հայոց թագավոր երկրի արևմտյան մասում: Իսկ Վանի թուլացած ու մասնատված թագավորությունը, պարփակվելով միայն Վանա լճի արևելյան ափով ու Այրարատով, իր գոյությունը պահպանում է ևս մի 20 տարի, մինչև VI դարի 80-ական թվականները և դրանից հետո վերջնականորեն դուրս է մղվում պատմության ասպարեզից: Ուշագրավ է, որ VII դ. վերջին Աստրեստանի կործանումով վերանում է «Ուրարտու» անվան հիշատակությունը:

**Պետական կարգը, տնտեսությունը և մշակույթը**

Վանի կամ Արարատյան թագավորությունը շուրջ երեք դար (մ.թ.ա. IX-VI դդ.) Հին Արևելքի ռազմաստրատեգիական հզոր պետություններից մեկն էր: Երկրում պետական իշխանությունը կենտրոնացված էր թագավորի և նրա մերձավոր ազնվազարմ ավագանու ձեռքում: Թագավորն ուներ անսահմանափակ իրավունքներ: Պետական համակարգում մեծ կշիռ ուներ քրմապետը՝ հոգևոր առաջնորդը: Երկիրը բաժանված էր խոշոր նահանգների: Պետությունը պաշտպանվում էր իր ժամանակի համար բավական լավ զինված ու հանդերձավորված բանակի միջոցով: Պատերազմը Վանի թագավորության համար ստրկական ուժի և հարստացման հիմնական աղբյուրներից էր: Սակայն ստրկական աշխատանքից զատ երկրի տնտեսական կյանքում զգալի տեսակարար կշիռ էին կազմում ազատ արտադրողները: Հայկական լեռնաշխարհում մինչև այժմ գտնված ավելի քան 600 սեպագիր արձանագրությունները, տարբեր վայրերում հայտնաբերված հնագիտական բնակավայրերի ու այլ հուշարձանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Վանի թագավորության շրջանում Հայաստանն ունեցել է զարգացած տնտեսություն (երկրագործություն, անասնապահություն, արհեստներ, առևտուր) և մշակույթ: Արժեքավոր նյութեր են ստացվել Վանի (Տուշպա), Արմավիրի (Արգիշտիխինիլի), Կարմիր բլուրի (Թեյշեբաինի), Արին-բերդի (Էրեբունի) պեղումներից: Կառուցվել են ջրանցքներ, գործածվել են երկաթե երկրագործական գործիքներ, Կարմիր բլուրում (Երևանի մոտ) կավե մեծ կարասների մեջ հայտնաբերվել են ցորենի, կորեկի, գարու ածխացած սերմեր, խաղողի մնացորդներ և այլն: Զարգացած են եղել արհեստի բազմաթիվ տեսակներ՝ մետաղամշակությունը, կավագործությունը, քարագործությունը, մանածագործությունը, կաշեգործությունը և այլն:

Վանի թագավորության ժամանակաշրջանում Հայաստանն ունեցել է հարուստ և բարձրարվեստ մշակույթ: Մշակութային կենտրոններ են եղել հատկապես խոշոր քաղաքները իրենց բերդերով, ամ-

ոցներով, բնակելի շենքերով, պալատներով: Թագավորության կառավարչական կենտրոնն էր մայրաքաղաք Տուշպան՝ Վանը: Հայտնի էին Էրեբունի, Թեյշեբաինի (Երևանում), Արգիշտիխինիլի քաղաքները: Տարբեր վայրերից հայտնաբերվել են պղնձից, բրոնզից, ոսկուց, արծաթից պատրաստված արձաններ, արձանիկներ, մեդալիոններ, դրամներ, խորաքանդակներ, բազմագույն որմնանկարներ, գեղազարդված սաղավարտներ, դեկորատիվ վահաններ, ռազմակառքեր, գեղարվեստական այլ իրեր: Մշակութային օջախներ էին աստվածների պաշտամունքային սրբավայրերը՝ տաճարները:

Դեռևս հնագույն ժամանակներից (նեոլիթից) ծայր է առել երկնային լուսատուների, երկնքի, պտղաբերության և բնության տարերքի պաշտամունքը: Հեթանոսական կրոնին բնորոշ էր բազմաստվածությունը: Արարատյան թագավորության սեպագիր արձանագրություններում հիշատակվում են 79 աստվածներ, որոնց մեջ գլխավորը Խալդ աստվածն էր: Խալդի գլխավոր սրբավայրը գտնվում էր Մուսասիրում: Գլխավոր աստվածուհին Խալդի կին Վարուբանին էր՝ արհեստների և արվեստների հովանավորը, բնության, տարերքի, պատերազմի աստվածը՝ Թեյշեբանը, արևի աստվածը՝ Շիվինին և այլք: Հայերը, ասորեստանյան սեպագրերը հարմարեցնելով իրենց լեզվին, ստեղծել են իրենց սեպագրերը: Օգտագործվում էին նաև գաղափարագրեր՝ հիերոգլիֆներ:

Այսպիսով, Վանի կամ Արարատյան թագավորությունն իր 270-ամյա գոյության ընթացքում ստեղծեց Հին Արևելքի զարգացած մշակույթներից մեկը, որը արժանի տեղ է գրավում համաշխարհային քաղաքակրթության անդաստանում:

Գլուխ երկրորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ.Թ.Ա. VI-I ԴԱՐԵՐՈՒՄ

## 1. Երվանդունիների (Հայկազունիների) համահայկական թագավորությունը (մ.թ.ա. VI-III դդ.)

**Համահայկական թագավորության կազմավորումը**

Ասորեստանի կործանումից հետո մարերի Կիաքսար թագավորը, ի հատուցումն Պարույր Սկայորդու ցույց տված օգնության, վերջինիս ճանաչում է հայոց թագավոր Արմե-Շուպրիա երկրում:

Շուտով, VI դարի 80-ական թվականներին, Վանի թագավորությունը լիովին վերանում է: Թագավորության մայրաքաղաք Տուշպա-Վանի գրավումից հետո, փաստորեն առանց ընդհատման, հաստատվում է Երվանդունիների համահայկական պետությունը: Թագավոր է կարգվում Երվանդ Սակավակյացը: Ըստ պատմահայր Մովսես Խորենացու, Երվանդ Սակավակյացը Պարույր Սկայորդի Հայկազուն արքայի ազգականներից էր: Երվանդ թագավորի անունով էլ հայ թագավորական այս ճյուղը կոչվեց «Երվանդյան» կամ «Երվանդունի»: Մովսես Խորենացին Երվանդունիների դինաստիան անվանում է «Հայկազանց»:

Երվանդունիներն իրենց պետության մեջ միավորեցին նախկին Վանի թագավորության տարածքները Ուրմիա լճի և Կուր և Եփրատ գետերի միջև ընկած ընդարձակ հողերը: Սա արդեն զուտ հայախոս, միատարր համահայկական ազգային պետություն էր: Մայրաքաղաքն էր Տուշպա-Վանը:

Սակայն Հայաստանի դաշնակցային հարաբերությունները Մարաստանի (Մեդիայի) հետ երկար չեն տևում: Մարերի Աժդահակ թագա-

վորի օրոք (585-550 թթ. մ.թ.ա.) Հայաստանը կախման մեջ է ընկնում և հարկատու դառնում Մարաստանին: Մ.թ.ա. VI դարի կեսերին թուլանում է մարերի պետությունը, որին կործանիչ հարված է հասցնում պարսից արքա Կյուրոս Մեծը՝ Աքեմենյան տոհմից (550-529 թթ. մ.թ.ա.):

**Հայաստանը Աքեմենյան տերության կազմում**

Մ.թ.ա. 550 թ. ստեղծվում է պարսկական հզոր պետություն: Մարաստանի թագավորության վերացման գործում Կյուրոսին օգնում է հայոց Տիգրան I Երվանդունի թագավորը՝ Երվանդ Սակավակյացի որդին: Տիգրան Երվանդունին հույս ուներ Կյուրոսին օգնելով վերականգնել Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը: Սակայն հայերի հույսերը չեն արդարանում: Շուտով Հայաստանն ընկնում է Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ, դառնում հարկատու՝ պահպանելով միայն իր ներքին ինքնուրույնությունը: Այսպիսով, արտաքին միջամտության հետևանքով Երվանդունյաց Հայաստանը երկար չպահպանեց իր անկախությունը և միասնությունը:

Արդեն Դարեհ I-ի գահակալության ժամանակ (522-486) Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող մի շարք երկրներ, այդ թվում նաև Հայաստանը, 521 թ. ապստամբում են՝ պարսկական լուծը թոթափելու համար: Մեծ դժվարությամբ ու դաժանությամբ հաջողվում է ճնշել ապստամբությունը: Այդ դեպքերի մասին Դարեհը փորագրել է տալիս երեք լեզվով (հին պարսկերեն, բաբելա-ասորերեն և էլամերեն) մի ընդարձակ սեպագիր արձանագրություն, որը հայտնի է «բեհիսթունյան» անունով: Այս արձանագրության մեջ, ինչպես արդեն նշվել է, Հայաստանը մի դեպքում կոչվում է «Արմենիա», իսկ մյուսում «Ուրարտու»: Այսինքն, սրանով հիմնավորապես հաստատվում է, որ Արմինիան և Ուրարտուն նույն երկիրն է:

Ապստամբության ճնշումից հետո Հայաստանը շուրջ 200 տարի մնաց Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ: Դարեհ I-ի աշխարհակալ տերությունը, որի սահմանները ձգվում էին Հնդկաստանից մինչև Միջերկրական ծով ու Հյուսիսային Աֆրիկա, բաժանվեց 20 խոշոր մարզերի, որոնք կոչվում էին սատրապություններ, իսկ դրանց կառավարիչները՝ սատրապներ: Մ.թ.ա. V դարի հույն խոշորագույն պատմիչ Հերոդոտը հաղորդում էր, որ Հայաստանը մտնում էր 13-րդ և 18-րդ սատրապությունների կազմի մեջ, որոնց սատրապները եղել են հայոց Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչները:

Հայաստանն աքեմենյանների տիրապետության ժամանակ զարգացած տնտեսությամբ հարուստ երկիր էր: Միայն Պարսկաստանին,

որպես հարկ, տարեկան վճարվում էր 600 տաղանդ արծաթ (1 տաղանդը հավասար էր 2 փթի կամ 32 կգ-ի) և 20000 ձի: Դարեհը կառուցում է 2400 կմ երկարությամբ «արքայական» կոչված ճանապարհը, որից 320 կմ անցնում էր Հայաստանի հարավային՝ Աղձնիք և Ծոփք նահանգներով: Հայերը Եփրատ գետով աշխույժ առևտուր էին անում Միջագետքի երկրների հետ: Այդ ժամանակվա Հայաստանի և հայերի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հույն պատմագիր և զորական Քսենոֆոնը իր «Անաբասիս» կամ «Տասը հազարի նահանջը» գրքում:

**Ալ. Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը**

Մ.թ.ա. IV դարի երկրորդ կեսին Աքեմենյան տերությունը աստիճանաբար թուլանում է: Եվ մ.թ.ա. 331 թ. Գավգամելա բնակավայրի մոտ Մակեդոնիայի թագավոր Ալեքսանդր Մեծը (Մակեդոնացին) խորտակիչ պարտության է մատնում Դարեհ III Կոդոմանի զորքերին և կործանում Աքեմենյան տերությունը: Մ.թ.ա. 323 թ.՝ Ալ. Մակեդոնացու վաղաժամ մահից հետո, նրա հսկայածավալ կայսրությունը, որը ձգվում էր մինչև Հնդկաստան ու Եգիպտոս, քայքայվում և բաժանվում է իր զորավարների միջև: Զորավար Սելևկոսը մ.թ.ա. 312 թ. Առաջավոր Ասիայում հիմնում է Սելևկյան հելլենիստական տերություն: Պետության մայրաքաղաքն էր սկզբում Բաբելոնը, հետո՝ Սելևկիա քաղաքը Տիգրիս գետի ափին, իսկ այնուհետև՝ Անտիոքը (Ասորիքում):

Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանը, թոթափելով աքեմենյան գերիշխանությունը, վերականգնում է իր անկախությունը: Սակայն այն տրոհվում է մասերի: Առաջանում են հայկական երեք ինքնուրույն թագավորություններ՝ Մեծ Հայքի, Փոքր Հայքի և ավելի ուշ՝ Ծոփք-Կոմմագենեի: Երեքում էլ իշխել են Երվանդյան արքայատոհմի ներկայացուցիչները:

Փոքր Հայքի թագավորությունն ընդգրկում էր Եփրատ, Ճորոխ, Գայլ և Հալիս գետերի վերին հոսանքների միջև ընկած տարածքը: Փոքր Հայքը իր անկախությունը պահպանեց մոտ 200 տարի, և II դարի վերջերին Միհրդատ Պոնտացին նվաճեց այն ու կցեց Պոնտական թագավորությանը:

Համեմատաբար փոքր թագավորություն էր Ծոփք-Կոմմագենեն, որն անջատվել էր Մեծ Հայքից: Եփրատ գետի աջ և ձախ հատվածներում ընկած Ծոփք-Կոմմագենեի միացյալ պետությունը III դարի վերջերին (Արշամի մահից հետո՝ մոտ 220 թ.) բաժանվում է երկու

ինքնուրույն թագավորությունների՝ Ծոփքի և Կոմմագենեի, որոնցում շարունակում էին իշխել Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչները: Ծոփքի մայրաքաղաքն էր Արշամաշատը, իսկ Կոմմագենեինը՝ Սամոսատը: Հայկական առաջին դրամները հատել են Ծոփքի երվանդյան թագավորները:

Այս թագավորություններից կենտրոնականը Մեծ Հայքինն էր: Հաշվի առնելով հարավից եկող Սելևկյան պետության նվաճումների սպառնալիքը՝ Մեծ Հայքի Երվանդունիները իրենց մայրաքաղաքը Տուշպա-Վանից տեղափոխում են Արարատյան դաշտ, սկզբում՝ Արմավիր (նախկին Արգիշտիխինիլի), իսկ հետո՝ Արաքս և Ախուրյան գետերի միախառնման տեղանքում կառուցված Երվանդաշատ քաղաքները: Բագավան ավանը վերածվում է հեթանոսական կրոնի կենտրոնի:

**Սելևկյան տերությունը և Հայաստանը**

Ինչպես տեսնում ենք, մ.թ.ա. III դարում Հայաստանը մասնատված էր առանձին թագավորությունների, որից և օգտվելով՝ Սելևկյան գահակալները ձգտում էին այն նվաճել ու միացնել կայսրությանը: III դարի վերջերին Սելևկյան պետությանը ենթարկվեցին Ծոփքը և Մեծ Հայքի մի զգալի մասը՝ որպես սատրապություններ: Այստեղ ստրատեգներ (ռազմակառավարիչներ) նշանակվեցին հայ մեծատոհմիկներից՝ Մեծ Հայքի հարավային նահանգներում Երվանդունիների տոհմից Արտաշեսը, իսկ Ծոփքում՝ Զարեհը: Սելևկյանների հովանավորությամբ (օգնությամբ) Երվանդ Վերջինի (IV-ի) դեմ դուրս եկավ զորավար Արտաշեսը: Վերջինս, պարտության մատնելով Երվանդ IV-ին և գրավելով Երվանդաշատ մայրաքաղաքը, մ.թ.ա. 201 թ. վերջ տվեց Երվանդունիների թագավորությանը:

**Հելլենիզմը**

Ալ. Մակեդոնացու արշավանքներով արևելյան երկրների պատմության մեջ սկսվում է մի դարաշրջան, որը կոչվում է հելլենիզմ (հունականություն): Հելլենիզմի բնորոշ կողմն այն էր, որ այդ արշավանքներից հետո հունամակեդոնական տնտեսական, քաղաքական և արտադրական ավելի զարգացած ձևերն ու միջոցները, մշակույթը, գիրն ու գրականությունը թափանցում են Արևելք, այդ թվում՝ նաև Հայաստան: Առաջանում են հելլենիստական քաղաքներ, որոնք դառնում են արհեստների, առևտրի և մշակույթի հայտնի կենտրոններ: Այդ ընթացքում հունական և արևելյան ժողովուրդների ստեղծած տեղական մշակույթների միախառնումից առաջանում է մշակույթի մի նոր որակ՝ հելլենիստական: Հելլենիզմի ազդեցությունը շարունակվեց ընդհուպ մինչև քրիստոնեության տա-

րածումը և հաստատումը Հայաստանում մ.թ. III-IV դարերը: Հելլենիստական մշակույթը հույների և Արևելքի ժողովուրդների սերտ ներդրումն է համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

## 2. Մեծ Հայքի միասնական թագավորությունը: Արտաշես I

**Մեծ Հայքի միասնական պետության առաջացումը**

Մ.թ.ա. II դարի սկզբներին Արևմուտքից սկսեց Արևելք թափանցել ռազմաստրկատիրական հզոր պետությունը՝ Հռոմը: Մ.թ.ա. 190 թ. Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հռոմեական զորքերը (լեգեոնները) ջախջախեցին սելևկյան բանակը: Դրանից հետո Սելևկյան տերությունը սկսեց քայքայվել: Օգտվելով այդ նպաստավոր դրությունից՝ Մեծ Հայքի ստրատեգ Արտաշեսը և Ծոփքի կառավարիչ Զարեհը իրենց հռչակում են թագավոր: Այսպիսով, մ.թ.ա. 189 թ. վերականգնվում է Հայոց անկախ թագավորությունը Մեծ Հայքում և Ծոփքում:

Արտաշես I-ը Մեծ Հայքում սկիզբ է դնում մի արքայատոհմի, որն իր անունով կոչվում է Արտաշեսյան: Արտաշեսյան թագավորությունը գոյատևել է 190 տարի մինչև մ.թ. 1 թվականը:

Արտաշես I-ը (189-160 թթ. մ.թ.ա.) միավորում է համարյա բոլոր հայկական հողերը (բացի Ծոփքից) և հիմնում Մեծ Հայքի միասնական ու կենտրոնացված պետություն: Նախ, նա որոշում է իր պետությանը միացնել Արարատյան դաշտը և Հյուսիսային Հայաստանը, ուր տակավին իշխում էին Երվանդունիները: Ըստ հույն աշխարհագիր Ստրաբոնի, այդ միացումը կատարվել է մինչ Արտաշեսի թագավոր հռչակվելը (201 թ. Իպսոսի ճակատամարտից հետո): Մովսես Խորենացին հայտնում է, որ Արտաշեսը, մուտք գործելով Արարատյան դաշտ, գրավում է Երվանդունիների մայրաքաղաք Երվանդաշատը, որի ժամանակ պատահաբար սպանվում է Երվանդ IV Վերջինը:

Թագավորության հռչակումից հետո Արտաշես արքան, մի շարք հաղթական կռիվներ մղելով, թագավորությանն է միացնում նաև Գուգարքը, Տայքը, Վասպուրականը, Արցախը, Սյունիքը, Ուտիքը, Փայտակարանը, մի խոսքով՝ Մեծ Հայքի բոլոր նահանգները, բացառությամբ Ծոփքի, որը Կապադովկիայի միջամտությամբ չի հաջողվում միացնել: Այն հետագայում միավորում է Տիգրան Մեծը: Արտա-

շես արքան ամրացնում է Հայաստանի հյուսիսային սահմանները կովկասյան լեռնականների՝ ալանների (օսերի) հարձակումներից և կնության է առնում նրանց թագավորի դստերը՝ Սաթենիկին:

**Արտաշես I-ի բարենորոգումները**

Արտաշեսի օրոք հայկական կենտրոնացված պետության ստեղծումը, բնականաբար, նպաստեց երկրի տնտեսական և մշակութային կյանքի վերելքին: Արտաշես արքան, պետության անվտանգությունն ապահովելու նպատակով, թագավորությունը բաժանեց չորս ռազմական շրջանների (զորավարությունների), որոնք հետագայում կոչվեցին բդեշխություններ (կուսակալություններ): Դրանց կառավարումը նա հանձնեց իր որդիներին ու մերձավորներին, միաժամանակ վերակառուցվեց բանակը:

Արտաշես արքան կատարեց հողերի վերաբաժանում և հողակտորների միջև դնել տվեց սահմանաքարեր, որոնց վրա կան արամեերեն արձանագրություններ: Այդ սահմանաքարերը, որպես կանոն, դրվում էին դաստակերտների (ագարակներ) և գյուղական համայնքների հողերի միջև, որպեսզի ագարակատերերը չզավթեն համայնական հողերը: Պետության կառավարումը հեշտացնելու նպատակով երկիրը վարչապես բաժանեց 120 գավառների: Բարեփոխվեցին նաև տոմարը և օրացույցը:

**Արտաշատի հիմնադրումը**

Արտաշես I-ը ուշադրություն է դարձնում նաև քաղաքաշինությանը: Նա կառուցում է մի նոր մայրաքաղաք Արարատյան դաշտում՝ Արաքս և Սև ջուր գետերի խառնման տեղանքում, հելլենիստական տիպի Արտաշատ մայրաքաղաքը: Հույն պատմագիրները վկայում են, որ Արտաշատի տեղի ընտրության և հատակագծման գործում Արտաշեսին իր խորհուրդներով օգնել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը: Մայրաքաղաքը գտնվում էր պետության գրեթե կենտրոնում՝ առևտրական բանուկ ճանապարհների հանգույցում: Քաղաքը շրջապատված էր հզոր պարիսպներով ու ջրապատնեշով: Արտաշատը մի քանի դար շարունակ Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկն էր: Արտաշես արքայի օրոք հիմնվեցին Զարեհավան և Զարիշատ անվանումներով մի քանի քաղաքներ:

**Հայաստանը Urswcbu արfայի ornf**

Արտաշես I-ի օրոք Հայաստանը դարձավ խիտ բնակչությամբ ռազմատնտեսապես հզոր ու բարգավաճ երկիր, որը, պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, այնքան էր շենացել, որ չուներ ոչ մի թիզ անմշակ հող: Եվ պատահական չէր, որ նույն Պատմահոր պատկերավոր արտահայտությամբ. «Արտաշեսի փեսայության ժամանակ ոսկի էր տեղում, իսկ Սաթենիկի հարսնությանը մարգարիտ»:

Արտաքին քաղաքականության ասպարեզում Արտաշես արքան հաջողությամբ դիմագրավում էր Սելևկյաններին և այլ ախոյան պետությունների: Նրա օրոք Մեծ Հայքի միասնական թագավորությունը դառնում է Մերձավոր Արևելքի ուժեղ և ազդեցիկ պետություններից մեկը: Արտաշես I-ը մահացել է մոտ 160 թ. մ.թ.ա.: Հետագայում Արտաշես I-ի գործը շարունակեց նրա հետնորդներից ամենատաղանդավորը՝ Տիգրան II-ը:

## 3. Հայաստանի հզորացումը Տիգրան Մեծի օրոք

**Տիգրան Մեծի գահակալությունը**

Մ.թ.ա. 95 թ. Մեծ Հայքում գահ է բարձրանում հին Հայաստանի ամենախոշոր քաղաքական գործիչներից մեկը՝ Տիգրան II-ը, որին, իրավամբ, անվանում են Տիգրան Մեծ: Նա մինչև գահ բարձրանալը, շուրջ 25 տարի, պատանդ էր հարևան պարթևական պետությունում Պարսկաստանում: Պատանդությունից ազատվելու համար Տիգրան թագաժառանգը, որպես փրկագին, պարթևներին է զիջում Հայաստանի հարավ-արևելքում գտնվող «70 հովիտներ» կոչված տարածքը և բարձրանում է Հայոց գահը: Արտաշես I-ի թոռ Տիգրան II-ը կամ Մեծը գահ է բարձրացել 45 տարեկան հասակում՝ 95 թ. մ.թ.ա. և թագավորել է մինչև 55 թ. մ.թ.ա.:

**Տիգրան Մեծի նվաճումները**

Տիգրան Մեծի օրոք Հայաստանը հասավ իր տնտեսական և ռազմաքաղաքական հզորության գագաթնակետին: Հայաստանի հզորացումը պայմանավորված էր ինչպես Տիգրան Մեծի քաջությամբ ու քաղաքական հեռատեսությամբ, այնպես էլ այդ ժամանակներում Հայաստանի համար ստեղծված արտաքին ու ներքին նպաստավոր պայմաններով: Այդ ժամանակաշրջանում Հայաստանին ախոյան երկու գլխավոր պետությունները՝ արևմուտքից Հռոմը, իսկ արևելքից Պարթևստանը (չհաշված հարավից՝ խիստ թուլացած Սելևկյաններին),

զբաղված էին իրենց ներքին հիմնախնդիրներով՝ գահակալական կռիվներով, ստրուկների ապստամբությունները ճնշելով և այլն:

Նախ, Տիգրան II-ը դաշինք կնքեց Սև ծովի հարավային ափին գտնվող Պոնտոսի զորեղ պետության թագավոր Միհրդատ VI-ի հետ: Այդ դաշինքը ամրապնդվեց Միհրդատի 15-ամյա դստեր՝ Կլեոպատրայի և 46-ամյա Տիգրանի ամուսնությամբ:

Ապա Տիգրանն ավարտեց Արտաշես I-ի կիսատ թողած գործը՝ հայկական հողերի միավորումը. 94 թ. մ.թ.ա. նա Մեծ Հայքին միացրեց Ծոփքը. դրանով իսկ ամբողջացվեց Մեծ Հայքի թագավորությունը: Տիգրանին հնազանդվեցին աղվանները և վրացիները: 93 թ. մ.թ.ա. հայ-պոնտական զորքերը գրավեցին Կապադովկիան: Այնուհետև Տիգրանը հարձակվեց Պարթևստանի վրա և վերադարձրեց Հայաստանից խլված «70 հովիտները», մեկը մյուսի հետևից գրավեց Ատրպատականը, Մարաստանը, Հյուսիսային Միջագետքը և միացրեց հայոց թագավորությանը: Հաղթողի իրավունքով Տիգրանը Պարթև Արշակունիներից խլեց «արքայից արքա» տիտղոսը:

Դրանից հետո նա գրավեց և իր գերիշխանությանը ենթարկեց Ասորիքը (Սիրիան), Կիլիկիան, Փյունիկիան՝ Սելևկյանների Անտիոք մայրաքաղաքով և այլն: Այսպիսով, մինչև մ.թ.ա. 70 թ., հաղթական պատերազմների շնորհիվ, Տիգրան Մեծը ստեղծեց մի ընդարձակ աշխարհակալ տերություն, որի սահմանները ձգվում էին Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոս, Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Դա բռնի ուժով ստեղծված բազմազգ, հելլենիստական, ստրկատիրական պետություն էր: Տերության մեջ խոսում էին 15-ից ավելի լեզուներով, և նվաճված երկրներն ու ժողովուրդները գտնվում էին զարգացման տարբեր մակարդակների վրա: Բազմազգ էր նաև Տիգրան II-ի բանակը, որի թիվը հասնում էր 300 հազարի:

Մեծ տերության ստեղծումից հետո Տիգրանը որոշեց հիմնել մի նոր մայրաքաղաք, որը գտնվեր երկրի աշխարհագրական կենտրոնում: Եվ 70-ական թթ. Աղձնիք նահանգում նա հիմնում է մեծաշուք Տիգրանակերտ մայրաքաղաքը, որն ուներ շուրջ 300 հազար բազմազգ բնակչություն: Կառուցվեց Արտաշատ-Տիգրանակերտ «արքունի ճանապարհը», զարկ տրվեց հելլենիստական մշակույթին, արհեստներին ու առևտրին:

**Պայքար Հռոմի դեմ**

Տիգրան Մեծի աշխարհակալ թագավորության վերելքին հաջորդում է վայրէջքը: Սպարտակի ապստամբության ճնշումից հետո հզորացած Հռոմը սկսում է ակտիվորեն միջամտել Արևելքի գործերին: Հռոմեական

զորավար Լուկուլլոսը սկզբում պարտության է մատնում Պոնտոսի թագավոր Միհրդատին և, ապա, պատրվակ բռնելով վերջինիս ապաստանելը Հայաստանում, առանց Հռոմի Սենատի որոշման, պատերազմ է սկսում Հայաստանի դեմ: Մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերին Տիգրանակերտի մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում, տեղանքի անհաջող ընտրության պատճառով, Տիգրանի բանակը պարտվում է: Այնուամենայնիվ, մինչ այդ հայոց հեծելազորին հաջողվում է ճեղքել հռոմեացիների շրջափակումը և մայրաքաղաքից դուրս բերել արքունիքն ու գանձարանը: Թշնամին գրավում և թալանում է մայրաքաղաքը: Հաջորդ տարի` 68 թ., Լուկուլլոսը որոշում է գրավել Հայաստանի հյուսիսային մայրաքաղաք Արտաշատը, և նրա զորքերը սկսում են հարավից, Տիգրանակերտի մոտով, Արածանիի հովտով շարժվել դեպի հյուսիս` Արտաշատի վրա: Այս անգամ հայկական զորքերը, դիմելով պարտիզանական պայքարի, մեծ կորուստներ են պատճառում և արյունաքամ անում հակառակորդին: 68 թ. հռոմեական զորքը փաստորեն անհաջողություն է կրում Արածանի գետի վերին հոսանքում տեղի ունեցած ահեղ ճակատամարտում: Դրանից հետո հռոմեացիները ստիպված նահանջում են Հյուսիսային Միջագետք` Մծբին քաղաքը:

**Մ.թ.ա. 66 թ. Արտաշատի պայմանագիրը**

Լուկուլլոսը հետ է կանչվում Հռոմ և նրա փոխարեն 67 թ. Արևելք է ուղարկվում հռչակավոր զորավար Պոմպեոսը: Միհրդատին վերջնականապես հաղթելուց և Պոնտոսը նվաճելուց հետո Պոմպեոսը շարժվում է Արտաշատի վրա: Եվ Տիգրան II-ը, հաշվի առնելով Հայաստանի համար ստեղծված ներքին ու արտաքին աննպաստ հանգամանքները, հաշտության առաջարկ է անում Պոմպեոսին: Վերջինս ընդունում է Տիգրանի առաջարկը, և մ.թ.ա. 66 թ. կնքվում է Արտաշատի հաշտության դաշնագիրը : Այդ պայմանագրով հայոց արքան հրաժարվում է իր նվաճած բոլոր երկրներից և պարտավորվում է վճարել մեծ ռազմատուգանք: Մյուս կողմից` Հռոմը ճանաչում է Մեծ Հայքի թագավորության տարածքային ամբողջականությունը` Եփրատից մինչև Կուր գետը և Կասպից ծովը: Միաժամանակ, Հայաստանը հռչակվում է «հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ», այսինքն` ընկնում է Հռոմի քաղաքական ազդեցության տակ:

Մ.թ.ա. 66 թ. Արտաշատի հաշտությունից հետո Տիգրանը թագավորեց ևս 11 տարի և մահացավ խոր ծերության հասակում:

## 4. Հայաստանը Տիգրան Մեծի հաջորդների օրոք: Արտաշեսյան թագավորության անկումը

**Արտավազդ II-ի գահակալությունը**

Տիգրան II-ի մահից հետո թագավորեց նրա որդին Արտավազդ II-ը (մ.թ.ա. 55-34 թթ.), որը հեռատես, հայրենասեր և հելլենիստական բարձր կրթության տեր անձնավորություն էր: Այդ ժամանակ Հայաստանը գտնվում էր երկու հզոր տերությունների՝ հռոմեական ու պարթևական պետությունների մրցակցության ոլորտում և կռվածաղիկ էր դրանց միջև: Այդ երկուսից Հայաստանի համար առավել վտանգավոր էր Հռոմը: Արտավազդը ջանում էր պահպանել Հայաստանի ինքնուրույնությունը և տարածքային ամբողջականությունը:

Արտավազդ II-ի օրոք Հայաստանը դեռևս բավականին ընդարձակ և ուժեղ պետություն էր: Մեզ են հասել Արտաշատի դրամատանը կտրված Արտավազդի գեղեցիկ արծաթյա դրամները, որոնց վրա դրոշմված են «Արքայից արքա» տիտղոսը: Եթե հռոմեացիները, հենվելով Արտաշատի պայմանագրի վրա, աշխատում էին հայկական ուժերն օգտագործել իրենց նվաճողական նպատակների համար, ապա պարթևները, ուղղելով իրենց սխալը, ձգտում էին դաշնակցել հայերի հետ՝ ընդդեմ Հռոմի: Արտավազդ արքան ձգտում էր, օգտագործելով հռոմա-պարթևական հակասությունները, Հայաստանը դուրս բերել Հռոմից ունեցած կախվածությունից:

**Հռոմի արևելյան արշավանքները**

Մ.թ.ա. 60 թ. Հռոմում կազմվեց առաջին եռապետությունը (տրիումվիրատ), որի մեջ մտան զորավարներ Պոմպեոսը, Կեսարը և Կրասոսը: Վերջինիս հանձնվեց Արևելքի երկրների կառավարումը:

Մ.թ.ա. 54 թ. մեծ բանակով Արևելք եկավ Սպարտակի ապստամբությունը դաժանորեն ճնշողը՝ զորավար Մարկոս Կրասոսը: Պարթևստանի դեմ պատերազմ վարելու համար նա հայոց թագավոր Արտավազդ II-ից պահանջեց, 66 թ. Պոմպեոս-Տիգրան II դաշինքի հիման վրա, իբրև «հռոմեական ժողովրդի դաշնակցի ու բարեկամի», օգնական զորք ուղարկել իրեն: Արտավազդը խորհուրդ տվեց Կրասոսին, որ արշավանքը կատարի ոչ թե Միջագետքի տափաստաններով, այլ Հայաստանով, որի ժամանակ հռոմեական զորքը կստանա ռազմական օգնություն և նյութատեխնիկական աջակցություն: Սակայն Կրասոսը մեծամտաբար մերժեց այդ խորհուրդը:

Իրականում Հայաստանի շահերը պահանջում էին մերձենալ քիչ

կտանգավոր, հարևան պարթևների հետ: Դրա համար էլ Արտավազ-դը գործնականում ոչ միայն չօգնեց Հռոմին, այլև դաշինք կնքեց իր անմիջական հարևան Պարթևստանի հետ: Մ.թ.ա. 53 թ. Միջագետքի Խառան քաղաքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում հռոմեական բանակը ծանր պարտություն կրեց պարթևներից: Կռվում հռոմեացիների բանակը տվեց 20 հազար զոհ: Սպանվեց նաև զորավար Կրասոսը: Ի նշան հաղթության պարթևների Սուրեն զորավարը Կրասոսի կտրված գլուխը ընծա ուղարկեց պարթևների թագավոր Օրոդեսին, որն այդ ժամանակ գտնվում էր Արտաշատում, և այն ցուցադրվեց հանդիսատեսին այդ պահին ընթացող թատերական ներկայացումներից մեկի ժամանակ: Խառանի ճակատամարտից հետո Հայաստանը վերականգնում է իր պետական ինքնուրույնությունը:

Մ.թ.ա. 44 թ. մարտի 15-ին դիկտատոր Հուլիոս Կեսարի դավադիր սպանությունից հետո, 43 թ. Հռոմում կազմվում է երկրորդ եռապետությունը, որի կազմի մեջ են մտնում Օկտավիանոսը (Կեսարի քրոջ որդին), Անտոնիոսը և Լեպիդոսը: Արևելքը բաժին է ընկնում Անտոնիոսին: Մ.թ.ա 38 թ. նա մեծ ուժերով գալիս է Արևելք: 37 թ. ստիպում է Արտավազդին կրկին ընդունել Հռոմի գերակայությունը, իսկ հաջորդ տարի՝ 36 թ., սկսում է արշավանքը պարթևների դեմ:

Այդպիսով, Կրասոսին փոխարինած Անտոնիոսը կրկին փորձում է շարունակել Հռոմի նվաճողական քաղաքականությունը Արևելքում: Նա, հաշվի առնելով պարթևների դեմ առաջին արշավանքի ժամանակ Կրասոսի թույլ տված սխալը (այն ժամանակ Կրասոսն արշավանքը կազմակերպեց Ասորիքի տափաստաններով), ծրագրում է պարթևների վրա արշավել Հայաստանի և Ատրպատականի վրայով: Սակայն այս անգամ էլ հռոմեացիների արշավանքը ձախողվում է: Եվ այդ անհաջողության մեղքը կրկին բարդելով Արտավազդի վրա Անտոնիոսը մ.թ.ա. 34 թ. ձերբակալում է հայոց թագավորին և շղթայված ուղարկում Ալեքսանդրիա՝ իբրև նվեր իր սիրուհուն Եգիպտոսի Կլեոպատրա թագուհուն: Ալեքսանդրիայում կազմակերպված հաղթահանդեսի (տրիումֆ) ժամանակ Անտոնիոսը պահանջում է, որ շղթայակապ Արտավազդը Կլեոպատրա թագուհու և բազմության ներկայությամբ ազատություն աղերսի: Սակայն, ինչպես վկայում է հռոմեական պատմիչ Դիոն Կասիոսը, հայոց գերված արքան արհամարհանքով հրաժարվում է նսեմանալուց: Դրանից հետո Արտավազդը բանտարկվում է և ապա մ.թ.ա. 31 թ. գլխատվում: Արտավազդի մահը մեծ կորուստ էր հայ ժողովրդի համար: Նա հայ առաջին մտավորական գործիչներից է, որ գրել է պատմական երկեր, ճառեր ու ողբերգություններ:

**Արտաշեսյանների դինաստիայի անկումը** Անտոնիոսի արևելյան արշավանքի անհաջողությունից հետո՝ մ.թ.ա. 32 թ. Անտոնիոսի և Օկտավիանոսի հարաբերությունները սրվում են: Երկու կոնսուլների միջև բախումը դառնում է անխուսափելի: 31 թ. սեպտեմբերի 2-ին Հունաստանի ծովափնյա Ակտիում քաղաքի մոտ տեղի է ունենում ծովային ճակատամարտ, որն ավարտվում է Օկտավիանոսի հաղթանակով: Անտոնիոսը և Կլեոպատրան ինքնասպան են լինում: Այս դեպքերից հետո՝ մ.թ.ա. 27 թ., Հռոմում վերջ է տրվում հանրապետությանը, և հաստատվում են միապետական կարգեր: Հռոմեական առաջին կայսրն է դառնում Օկտավիանոսը (մ.թ.ա. 27 թ. - մ. թ. 14 թ.), որն իրեն օծում է Օգոստոս, այսինքն՝ «Սրբազան» մականունով:

Արտավազդ II-ի սպանությունից հետո նրա որդի Արտաշես II-ը պարթևների օգնությամբ թոթափում է հռոմեական տիրապետությունը և հաստատվում հայոց գահին (մ.թ.ա. 30-20 թթ.): Նա լուծում է իր հոր վրեժը, սպանում կամ Հայաստանից դուրս է քշում բոլոր հռոմեացիներին, վերականգնում Հայաստանի անկախությունը: Արտաշես II-ը ևս իր հոր նման կտրել է արծաթյա դրամներ, որոնց վրա դարձյալ դրոշմված է «Արքայից արքա» տիտղոսը: Ցավոք, երկար չի տևում Հայաստանի անկախությունը: Շուտով Հռոմը կրկին միջամտում է Հայաստանի ներքին գործերին: Մ.թ.ա. 20 թ. դավադրաբար սպանվում է Արտաշես II-ը:

I-ին դարի վերջին երկու տասնամյակները Արտաշեսյան դինաստիայի անկման տարիներ եղան: Հռոմից կիսակախյալ դրության մեջ ընկած Հայաստանում թագավորեցին Արտաշես II-ի կրտսեր եղբայր, հռոմեասեր Տիգրան III-ը (մ.թ.ա. 20-8 թթ.), իսկ մ.թ.ա. 8-1 թթ. որոշ ընդհատումներով միասին գահակալեցին Տիգրան IV-ը և նրա քույր Էրատոն:

Այս ընթացքում ևս հայ ժողովուրդը շարունակեց պայքարել Հռոմի դեմ հանուն իր անկախ պետականության: Ի վերջո մ.թ. 1 թվականին հյուսիս-կովկասյան լեռնականների դեմ մղված կռիվներում սպանվում է Տիգրան IV-ը, իսկ նրա քույր Էրատոն էլ հրաժարվում է գահից, և դրանով սպառվում է Արտաշեսյան արքայատոհմը:

Գլուխ երրորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ.Թ. I-V ԴԱՐԵՐՈՒՄ

## 1. Արշակունյաց թագավորության հաստատումը Հայաստանում: Տրդատ I

**Տրդատ Արշակունին հայոց գահակալ**

1 թ. Հայաստանում վերացավ Արտաշեսյան դինաստիան, սակայն պահպանվեց պետականությունը: Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո Հայաստանը փաստորեն դարձավ կռվախնձոր երկու հզոր տերությունների Հռոմի և Պարթևական թագավորության միջև: Գլխավոր վտանգը դարձյալ գալիս էր Հռոմից, որը ձգտում էր Հայաստանը, մյուս նվաճված երկրների նման, դարձնել Հռոմեական կայսրության մարզ: Հռոմեական կայսրերը I դարի առաջին կեսին հայոց գահին նստեցնում են իրենց հլու կամակատար օտարազգի դրածոների: Հռոմի դրածո թագավորները ամենևին էլ շահագրգռված չէին Հայաստանի ճակատագրով, ուստի հայերը չէին հանդուրժում նրանց: Որպես կանոն, հայերը նրանց սպանում կամ դուրս էին քշում երկրից: Համեմատաբար երկար է թագավորել Զենոն-Արտաշեսը (Պոնտոսի թագավորի որդին): Զենոնը, որին հայերը սիրով կոչել են Արտաշես, թագավորել է մ.թ. 18-34 թթ., և նա միակն էր, որ մահացել է իր բնական մահով: Զենոն-Արտաշեսի օրոք Հայաստանը ապրեց խաղաղության ու ներքին անդորրության շրջան: 34 թ., նրա մահից հետո, պարթևների արքայից արքա Արտավան III-ը, անտեսելով Հռոմին, հայոց գահին նստեցրեց իր ավագ որդուն Արշակին, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Սանատրուկ անունով: Ստացվում է, որ Հռոմն ու Պարթևստանը փոխնիփոխ մրցակ-

ցում են իրար հետ, թե հայոց գահին ում թեկնածուն կնստի:

Մեծ Հայքի գահի նկատմամբ հավակնություններ ուներ նաև Իբերական (Վրացական) արքայական տունը, որը նախկինում խնամիական կապեր է ունեցել հայկական արքայատոհմերի հետ: Եվ ահա Հռոմի Տիբերիոս կայսեր (14-37 թթ.) հովանավորությամբ վրաց թագավոր Փարսմանի եղբայր Միհրդատին հաջողվում է կաշառել հայ պալատականներին (ավագանուն), թունավորել Արշակ-Սանատրուկին և 35 թ. նստել Հայոց գահին: Ավելի ուշ՝ 51 թ., Միհրդատը զոհ է գնում իր եղբոր՝ Փարսմանի և եղբորորդի Հռադամիզդի խարդավանքներին: Վերջինս, գալով Հայաստան, նենգաբար, ծանր գործերի տակ խեղդել է տալիս իր հորեղբորը՝ Միհրդատին և նրա կնոջը (որը միաժամանակ իր քույրն էր) և 51 թ. իրեն հայտարարում Հայաստանի թագավոր: Հռադամիզդը դա անում էր իր հոր հրահրումով, որը ցանկանում էր որդուն հեռու պահել իր գահի նկատմամբ ոտնձգություններից: Իսկ այդ ամենը տեղի էր ունենում Հռոմի թողտվությամբ:

Մինչդեռ հայ ժողովուրդը մտադիր չէր հաշտվել անկախ պետականության կորստի հետ: Հայ ավագանին, տեսնելով, որ պարթևներին առանձնապես ձեռնտու չէ սպառնալ Հայաստանի անկախությանը և տարածքային ամբողջականությանը, դաշնակցում է Պարթև Արշակունի արքայատոհմի նշանավոր թագավոր Վաղարշ I-ի հետ (51-75 թթ.)՝ ընդդեմ Հռոմի:

52 թ., հայերի համաձայնությամբ, Վաղարշ թագավորն իր զորքով մտնում է Հայաստան: Հայ-պարթևական միացյալ ուժերը դուրս են քշում հռոմեացիներին ու նրանց դրածո վրաց թագաժառանգ Հռադամիզդին[1], ազատագրում Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները և Վաղարշ I-ի եղբայր Տրդատին կարգում Հայաստանի թագավոր: Տրդատի գահակալության լուրը Հայաստանում ցնծությամբ է ընդունվում: Այսպիսով, Հայաստանում սկզբնավորվում է Արշակունյաց թագավորությունը: Հարկ է հիշեցնել, որ «Արշակունի» անվանու-

---

[1] Հռոմեական պատմիչ Կ. Տակիտոսը վկայում է, որ վրաց թագաժառանգ Հռադամիզդը ստիպված դիմում է փախուստի դեպի Իբերիա: Ձիերով փախչելու ժամանակ նա դաշունահարում է իր հղի կնոջը՝ Զենոբիային և գցում Արաքսը, որպեսզի իր սիրեցյալը չընկնի թշնամու ձեռքը և անարգվի: Սակայն հայ հովիվները գտնում և փրկում են Զենոբիային: Նրան տանում են Տրդատի պալատը, ուր նա ծննդաբերում ու արու զավակ է ունենում: Տղայի անունը դնում են Փարսման պապի անունով, որը հետագայում թագավորում է Վրաց աշխարհում իբրև Փարսման II (100-114 թթ.):

մը գալիս է մ.թ.ա. 250 թ. Իրանում հիմնված պարթևական պետության հիմնադիր Արշակ թագավորի (ցեղապետի) անունից:

**Հռոմեական արշավանքները և Հռանդեայի հաշտության պայմանագիրը**

Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանի գահին առաջ բերեց պատերազմ մի կողմից Հռոմեական կայսրության, իսկ մյուս կողմից Պարթևական թագավորության ու նրա դաշնակից Հայաստանի միջև, որը որոշ ընդհատումներով տևեց 10 տարի (54-64 թթ.):

Հռոմի Ներոն (54-68 թթ.) կայսրը Արևելք ուղարկեց հմուտ զորավար Գնեոս Կորբուլոնին: 58 թ. հռոմեական զորքերը մեծ դժվարությամբ գրավեցին Հայաստանը և հիմնահատակ ավերեցին նրա մայրաքաղաք Արտաշատը: Տրդատը ստիպված իր զորքով հեռացավ Հայաստանից: Հռոմեացիներին հաջողվեց գրավել նաև Հայաստանի երկրորդ մայրաքաղաքը՝ Տիգրանակերտը:

61 թ. վերսկսվեց պատերազմը Հռոմի հետ: Հայ-պարթևական միացյալ ուժերը, ծանր կացության մեջ գցելով հռոմեական զորքերին, հարկադրեցին Կորբուլոնին Մծբին քաղաքում կնքել զինադադար (61 թ.): Այդ զինադադարի համաձայն, Տրդատը ճանաչվում էր Հայոց թագավոր, իսկ Հայաստանը հռչակվում էր անկախ և ինքնուրույն պետություն: Երկրից դուրս էին բերվելու Հռոմի և Պարթևստանի ռազմական ուժերը: Բայց Ներոնը չճանաչեց այդ պայմանները և 62 թ. Արևելք ուղարկեց նոր բանակ Քեսեննիոս Պետոս զորավարի հրամանատարությամբ: Սակայն Պետոսը անտաղանդ զորավար էր: Նույն 62 թ., Խարբերդի դաշտում գտնվող Հռանդեա կոչված վայրում հայ-պարթևական միացյալ զորքերը շրջապատում են հռոմեացիներին և ստիպում անձնատուր լինել: Հռոմեական զորավարը ստիպված նույն վայրում հաշտություն է առաջարկում: Կնքված հաշտությամբ, հռոմեացիները պետք է հեռանային Հայաստանից, իսկ Տրդատը ճանաչվեր հայոց թագավոր, պայմանով, որ անձամբ գնար Հռոմ և Ներոնի ձեռքից ստանար թագը: Բացի այդ, հռոմեական զինվորները ստիպված են լինում կատարել նվաստացուցիչ մի արարողություն՝ զինաթափ անցնել երեք նիզակից պատրաստված «լծի» տակով: Հռոմեական պատմիչ Տակիտոսի վկայությամբ, Հայաստանից հեռացող Պետոսը օրական կտրում անցնում էր 40 մղոն (62 կմ):

63 թ. Վաղարշ I-ը դեսպաններ է ուղարկում Հռոմ Հռանդեայի հաշ-

տությունը վավերացնելու համար: Սակայն Ներոնը հրաժարվում է «անպատվաբեր խաղաղությունից» և որոշում է շարունակել պատերազմը: Բայց այս անգամ նա սիրալիր է վերաբերվում Վաղարշի դեսպաններին և առատ ընծաներով նրանց ետ է ուղարկում:

64 թ. կրկին Հայաստան եկած զորավար Կորբուլոնը նույն Հռանդեայում կնքում է վերջնական հաշտության պայմանագիրը, որով հաստատվում է նախորդ հաշտության պայմանագիրը: Ներոն կայսեր կողմից թագը ստանալու համար 65 թ. Տրդատը մեծ շքախմբով (3000 հոգի) ճանապարհվում է Հռոմ, հանդիսավորությամբ թագադրվում և մեծ նվերներով (50 մլն. դենարի) 66 թ. վերադառնում: Վերականգնվեց Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատ մայրաքաղաքը և փառասեր կայսեր խնդրանքով այն ժամանակավորապես կոչվեց Ներոնեա:

Այսպիսով, վերականգնվեց Հայաստանի քաղաքական անկախությունը, և միջազգայնորեն հաստատվեց Արշակունիների արքայատոհմը, որը տևեց մինչև 428 թ.: Տրդատ I-ը (52-88 թթ.) Հայաստանում սկիզբ դրեց Արշակունիների թագավորությանը: Տրդատի գահակալությունը կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի. առաջին՝ 52-65 թթ., երբ նրա գահակալությունը պաշտոնապես չէր ճանաչվել Հռոմի կողմից, և երկրորդ՝ 65-88 թթ., երբ նա պաշտոնապես թագադրվեց և միջազգայնորեն ճանաչվեց Հռոմի ու այլ պետությունների կողմից:

**Տրդատ I-ի գործունեությունը: Հայաստանը II-III դարերում**

64 թ. Հռանդեայի դաշնագրից հետո երկարամյա խաղաղություն հաստատվեց Արևելքում մինչև Տրայանոսի արշավանքը՝ 114 թ., որը նպաստեց Հայաստանում քաղաքների, արհեստների, առևտրի և մշակույթի զարգացմանը:

Տրդատ I-ի գահակալության տարիներին վերականգնվեց ավերված Արտաշատ մայրաքաղաքը, վերակառուցվեց Գառնիի ամրոցը: Այդ նույն ժամանակ էլ՝ 77 թ., կառուցվեց Գառնիի սյունազարդ և հիասքանչ հեթանոսական տաճարը:

Տրդատ I-ի գործունեությունից մեզ հայտնի է նաև, որ նա պատերազմել է հյուսիսից ներխուժած ալանական ցեղերի դեմ:

Պետք է ասել, որ հայոց պատմությունը առաջին դարի վերջերին և երկրորդ դարում բավական մութ է, քանզի փաստական տվյալները սուղ են ու կցկտուր: Տրդատ I-ին հաջորդել է Սանատրուկ թագավորը

(88-110 թթ.)։ Հայոց Վաղարշ I թագավորի օրոք (117-140 թթ.) հիմնադրվում է Վաղարշապատը (այժմ Էջմիածին), որը դառնում է հայ Արշակունիների թագավորության երկրորդ մայրաքաղաքը։ Հայաստանի հետագա պարթևազգի գահակալները հայկական միջավայրում շուտով հայանում են։ Արդեն II դարի վերջերից, սկսած Վաղարշ II-ից (185-198), հայ Արշակունիների գահը դառնում է ժառանգական. անցնում է հորից որդուն, իսկ գահակալն այլևս չէր հաստատվում Հռոմի կողմից, ինչպես նախատեսված էր Հռանդեայի պայմանագրով։ 198 թ. Վաղարշ II-ը զոհվեց կովկասյան լեռնականների՝ ալանների ու մազքութների դեմ մղված կռիվների ժամանակ։ Նրան հաջորդեց որդին՝ Խոսրով I-ը (198-215 թթ.)։

II-III դարերում Հայաստանը կրկին վերածվեց պատերազմների թատերաբեմի։ Հռոմեական տիրակալները ձգտում էին Հայաստանը դարձնել կայսրության պրովինցիա։ Այդպիսի բացորոշ ուղեգիծ էին վարում հատկապես Տրայանոս և Կարակալլա կայսրերը։ 215 թ. վերջինս գալիս է Անտիոք, խաբեությամբ իր մոտ հրավիրում Խոսրովին, ձերբակալում նրան և ուղարկում Հռոմ։ Հայերը, զայրացած կայսեր նենգ արարքից, երկրից վտարում են Կարակալլայի ուղարկած զորքերը և հայոց նոր թագավոր կարգում Խոսրովի որդուն՝ Տրդատ II-ին (215-252 թթ.)։

III դարում Հայաստանի և Պարսկաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցան շրջադարձային փոփոխություններ։ 224-226 թթ. ընթացքում Իրանում կատարվեց քաղաքական հեղաշրջում։ 226 թ. վերացվեց Պարթև Արշակունիների թագավորությունը, և հաստատվեց Սասանյան արքայատոհմը։ Արտաշիր Սասանյանը (226-241) իրեն հայտարարեց «արքայից արքա»։ Այս հեղաշրջման հետևանքով սրվեցին հայ-իրանական հարաբերությունները։ Սասանյանները հզորանալով՝ սկսեցին սպառնալ և՛ Հայաստանին, և՛ Հռոմին։ Սասանյան Իրանի թագավորները հենց սկզբից էլ թշնամական դիրք գրավեցին Հայաստանի հանդեպ, մանավանդ, որ այստեղ թագավորում էր հայ պարթև Արշակունիների արքայատոհմը, որը համարվում էր թշնամի Սասանյաններին։ Ստեղծված պայմաններում հայերը հարկադրված փոխում են իրենց քաղաքական կողմնորոշումը՝ անկախությունը պահպանելու համար և օգնության դիմում այժմ արդեն թուլացած և նվազ վտանգավոր Հռոմին։ Սկսած այս ժամանակաշրջանից՝ նկատելի է դառնում Հռոմի և Հայաստանի արտաքին քաղաքական շահերի հակադրության մեղմացում։ Հայ պարթև Արշակունիների արքայատոհ-

մին թշնամի Սասանյան Պարսկաստանի գահակալները ձգտում էին գահընկեց անել հայ արքաներին, Հայաստանը նվաճել և իրենց ենթարկել: Այնուամենայնիվ, Հռոմի օգնությամբ Հայաստանում թագավոր է հռչակվում Տրդատ II-ի որդի Խոսրով II-ը (273-287 թթ.): 287 թ. պարսից թագավորը Հայաստան է ուղարկում Անակ Պարթևին (Գրիգոր Լուսավորչի հորը), որն էլ Վաղարշապատում սպանում է Խոսրովին: Սասանյանները կրկին նվաճում են Հայաստանը: Թագաժառանգ Տրդատը փախչում է Հռոմ:

Հայաստանին տիրելու համար պարսկա-հռոմեական պայքարը նոր թափ ստացավ III դարի վերջին, որն ընթացավ փոփոխակի հաջողություններով: Ի վերջո, հռոմեական բանակը, հայկական զորամասերի օգնությամբ, խոշոր հաղթանակ տարավ Սասանյանների դեմ: 298 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Մծբինում կնքվեց 40-ամյա հաշտության պայմանագիր, որով երկուստեք ճանաչվում էր Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Թագավոր է դառնում Խոսրով II-ի որդին՝ Տրդատ III Մեծը (298-330 թթ.):

## 2. Հին Հայաստանի տնտեսական կյանքը և պետահասարակական կարգը

**Տնտեսությունը. երկրագործություն և անասնապահություն**

Հնուց ի վեր Հայաստանն ունեցել է զարգացած տնտեսություն, անասնապահություն, արհեստագործություն, քաղաքային կյանք և առևտուր: Մ.թ.ա. V դարի վերջին Հայաստանով ճանապարհորդած հույն զորավար-պատմիչ Քսենոֆոնը իր «Անաբասիս» (Տասը հազարի նահանջը) աշխատության մեջ պատմում է, թե որքան հարուստ գյուղատնտեսական երկիր էր Հայաստանը: Հայերի տները լի էին տարբեր տեսակի ուտելիքներով ու խմիչքներով:

Հայաստանի տնտեսությունը վերելք է ապրում հելլենիստական դարաշրջանում, երբ ծաղկում են քաղաքները, արհեստագործությունը, ընդարձակվում են ցանքսերը, կատարելագործվում գործիքները: Պատմահայր Մ. Խորենացին վկայում է, որ Արտաշես I-ի ժամանակ Հայաստանում անմշակ հող գրեթե չէր մնացել: Հայաստանի հարուստ ալպիական մարգագետինները նպաստում էին անասնապա-

հության զարգացմանը: Նախալեռներում և լեռներում պահվում էին խոշոր և մանր եղջերավոր անասունների մեծաքանակ հոտեր: Ժամանակի ընթացքում վերանորոգվում էին հին ջրանցքները, կառուցվում նորերը: Հայաստանի անկախ և միասնական պետականության վերականգնումը նպաստում էր տնտեսության առաջընթացին: Հին Հայաստանի տնտեսությանը բնորոշ էին ինչպես բնատնտեսական ու տնայնագործական, այնպես էլ ապրանքաշուկայական հարաբերությունները: Թե ժողովրդի կյանքում երկրագործությունը որքան մեծ դեր էր խաղում, այդ երևում է հայոց նախաքրիստոնեական պաշտամունքից: Հեթանոսական աստվածներից շատերի՝ Արա Գեղեցիկի, Վահագնի, Անահիտի, Տիրի, Միհրի պաշտամունքը, այսպես թե այնպես, կապված էր երկրագործության, բնության, բերքուբարիքի առատության հետ:

**Հին Հայաստանի քաղաքները, արհեստները և առևտուրը**

Հայաստանի տնտեսական զարգացման հետևանքով լայն թափ է ստանում քաղաքաշինությունը: Առաջանում են տասնյակ նոր քաղաքներ՝ Երվանդաշատ, Արշամաշատ, Զարեհավան, Զարիշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Գառնի, Վաղարշապատ, Նախճավան, Դվին և այլն: Քաղաքներն ունեին ներքին ինքնավարություն, հողային տիրույթներ: Քաղաքագլխին կոչում էին շահապ: Քաղաքների զարգացումը նպաստում է արհեստների վերելքին: Մի կողմից Հայաստանի ընդերքի օգտակար հանածոների առատությունը, իսկ մյուս կողմից՝ գյուղատնտեսական հումքի առկայությունը խթանում էին արհեստագործության շատ ճյուղերի զարգացումը: Առանձնապես տարածված արհեստներից էին դարբնությունը, զինագործությունը, ոսկերչությունը, հյուսնությունը, բրուտագործությունը, ջուլհակությունը, գորգագործությունը, քարագործությունը և այլն: Հայաստանում էր ստացվում համբավավոր որդան կարմիր ներկը: Հայ մատենագիրները հիշատակում են շուրջ 30 տեսակի արհեստներ:

Գյուղատնտեսության, քաղաքների ու արհեստների զարգացումը, բնականաբար, նպաստում էր ներքին ու արտաքին առևտրի վերելքին: Աշխույժ ապրանքափոխանակություն էր կատարվում երկրի ներսում՝ տարբեր նահանգների ու գավառների, քաղաքի և գյուղի, երկրագործ շինականի և քաղաքաբնակ՝ առևտրականի ու արհեստավորի միջև: Հայաստանի հարմար աշխարհագրական դիրքը նպաստել է նաև արտաքին առևտրի զարգացմանը: Հայաստանով էին անց-

նում միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհները: Հույն պատմիչ Հերոդոտը նկարագրում է Եփրատ գետի վրայով Միջագետքի հետ հայերի աշխույժ առևտրական գործունեությունը: Արտահանվում և ներմուծվում էին բազմապիսի գյուղատնտեսական և արդյունագործական ապրանքներ: Հին Հայաստանում զարգացած առևտրի մասին են վկայում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված տարբեր երկրների մեծ թվով դրամները: Գործածության մեջ էին ինչպես հռոմեական ու պարսկական, այնպես էլ հայկական դրամները: Ցավոք, մինչև օրս հայ Արշակունի թագավորների դրամներ չեն գտնվել: Նրանք հավանաբար դրամ կտրելու իրավունք չեն ունեցել:

Հայաստանը միջազգային տարանցիկ առևտրում կատարում է ոչ միայն կամրջի դեր, այլև ինքը ևս իր արտադրած ապրանքները հանում էր շուկա: Հայաստանը արտահանում էր մետաղագործական իրեր, գինի, հացահատիկ, «որդան կարմիր» ներկ, կաշի, ձիեր ու ջորիներ, ձկնեղեն, քարատեսակներ և այլն:

**Հասարակության սոցիալական (դասային) կառուցվածքը**

Հասարակությունը սոցիալական կառուցվածքի տեսակետից կարելի էր բաժանել երեք խմբի՝ ազնվականություն (արտոնյալ դաս), ազատներ (միջին դաս) և անազատներ (ստորին դաս): Հայաստանի արտոնյալ դասը ազնվականությունն էր: Երկրի գերագույն ազնվականը թագավորն էր: Այս դասի մեջ մտնում էին թագավորի ընտանիքի անդամները, նրա հարազատները, նախարարները, պալատականները, բարձրաստիճան հոգևորականությունը, զորահրամանատարները, արքունի պաշտոնյաները, մանր ծառայողները և այլն: Երկրի ամբողջ պաշտոնավարությունը իրականացնում էր այդ դասը: Իր հերթին, արտոնյալ դասը բաժանվում էր խոշոր և մանր ազնվականության: Սոցիալական այս խումբը հասարակության վերնախավն էր:

Հասարակության սոցիալական կառուցվածքում միջանկյալ դիրք էին գրավում առևտրավաճառականական ու արհեստավորական դասերը՝ քաղաքում, իսկ ազատ գյուղացիությունը՝ շինականները, գյուղում: Վերջիններս կազմում էին գյուղական բնակչության հիմնական զանգվածը: Կարելի է ասել, որ սոցիալական այս խմբերի վրա էր հիմնականում ընկած երկրի պաշտպանությունը, քանզի սրանք էին կազմում հայկական բանակի հիմքը:

Հասարակության սոցիալական կառուցվածքի ստորին աստիճանն էին զբաղեցնում անազատները՝ կիսակախյալ և կախյալ վիճակում գտնվող ծառաները, մշակները, ռամիկները, ինչպես նաև ստրուկները (գերիներ) և այլն: Հարկ է նշել, որ, որպես կանոն, ստրուկ էին դառնում պատերազմների ժամանակ գերի ընկած այլազգիները: Այսինքն՝ պատերազմներն են եղել ստրկության գլխավոր աղբյուրը: Իրավազուրկ սոցիալական այս խմբերի վրա էլ ընկնում էր հարկերի և պարհակների հիմնական ծանրությունը:

Ըստ զբաղմունքի՝ հասարակությունը կարելի է բաժանել հետևյալ պրոֆեսիոնալ խմբերի՝ երկրագործների, լեռնաբնակ կիսավաչկատուն անասնապահների, արհեստավորների, առևտրականների, վաճառականների, հոգևորականության, զինվորականության, պետական ծառայողների և այլն:

Հնուց ի վեր հայ ժողովրդի սոցիալական կյանքում շատ կարևոր դեր է խաղացել ընտանիքը: Դարեր շարունակ հայ ավանդապահ ու ամուր ընտանիքը եղել է ազգի գոյատևման կարևոր կռվաններից մեկը:

**Գյուղական համայնքը**

Ըստ բնակության վայրի՝ Հայաստանի բնակչությունը կարելի է բաժանել գյուղաբնակների (գյուղացիների) և քաղաքաբնակների (քաղաքացիների): Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը ապրում էր գյուղերում՝ գյուղական համայնքներում: Ազգային կազմի տեսակետից քաղաքներում, հայերից բացի, ապրում էին մեծ թվով հրեաներ, ասորիներ, հույներ, պարսիկներ և այլն: Սրանք ապրում էին ըստ թաղամասերի:

Հայաստանում նյութական բարիքների հիմնական արարողը ազատ գյուղացին էր՝ շինականը: Գյուղացիները համախմբվում էին գյուղական համայնքներում: Համայնքի անդամ գյուղացիները ունեին հավասար իրավունքներ: Նրանք համայնքի ընդհանուր ժողովում ընտրում էին գյուղապետին՝ գեղջավագին, վճռում հողաբաժանության, ծխաբաժանության, հարկերի և այլ ներքին բնույթի խնդիրներ: Համայնքի ներսում հողը բաժանվում էր ըստ ծխերի՝ հավասար սկզբունքով: Գյուղացիները պարտավոր էին պետությանը հարկ վճարել, կատարել պարհակներ (շինարարական աշխատանքներ), պատերազմի ժամանակ մտնել աշխարհազորի մեջ: Սակայն, ժամանակի ընթացքում, համայնքի ներսում տեղի է ունենում ունեցվածքային (սոցիա-

լական) շերտավորում: Ավելի ուժեղ ընտանիքները տեր են դառնում լավագույն հողերի, իսկ թույլերը կախման մեջ են ընկնում նրանցից: Հին Հայաստանում հիմնական աշխատուժը ազատ գյուղացիությունն էր: Սակայն դրա կողքին օգտագործվել է ծառա-մշակների, ինչպես նաև ստրուկների աշխատանքը: Ծառաները կամ մշակները աշխատում էին արքունական կալվածքներում կամ վերնախավի թագավորներից նվեր ստացած ագարակ-դաստակերտներում: Ագարակատերերը կամ կալվածատերերը ձգտում էին զավթել նաև գյուղական համայնքների հողերը: Այդ կանխելու նպատակով Արտաշես I-ը սահմանաքարերով հստակ սահմանազատեց ագարակների և համայնքների հողերը:

**Պետական կարգը**

Հայկական պետությունն իր բնույթով արևելյան տիպի միապետություն էր: Հայաստանում պետության գլխավոր պաշտոնատար անձը թագավորն էր (միապետը), որի իշխանությունը անսահմանափակ էր: Նա էր երկրի ներքին և արտաքին քաղաքականության հարցեր վճռողը, ինչպես նաև հայոց ամբողջ զորքի գերագույն հրամանատարը: Թագավորի իշխանությունը ժառանգաբար փոխանցվում էր հորից որդուն: Հայոց թագավորները կտրել են դրամներ, կրել են տարբեր տիտղոսներ «թագավոր», «արքա», «արքայից արքա» և այլն:

Վարչական տեսակետից Հայաստանը հնուց բաժանվում էր 15 նահանգների, սրանք էլ գավառների: Նահանգները և գավառները կառավարում էին թագավորի նշանակած կառավարիչները նախարարները, որոնք էլ հետագայում դառնում էին դրանց ժառանգական տերերը:

**Գործակալությունները**

Երկիրը (պետությունը) կառավարվում էր գործակալությունների (նախարարությունների) միջոցով: Գործակալությունների ղեկավարներին գործակալներին, նշանակում էր թագավորը: Հայոց թագավորության հայտնի գործակալություններից էին հազարապետությունը, սպարապետությունը, թագադիր ասպետությունը, մարդպետությունը, մաղխազությունը, սենեկապետությունը, մեծ դատավորությունը:

Հազարապետը պետության գլխավոր պաշտոնյան էր, որ տնօրինում էր տնտեսության, հարկերի գանձման, ֆինանսների, պետական շինարարական աշխատանքները: Հազարապետությունը Գնունինե-

րի, այնուհետև Անատունիների տան ժառանգական պաշտոնն էր:

Հայաստանի զինված ուժերը կազմակերպում և գլխավորում էր սպարապետը: Այս պաշտոնը Մամիկոնյանների մենաշնորհն էր:

Թագադիր ասպետության գործակալությունը, բացի արքային թագով պսակելը, վերահսկում էր արքունիքի գործերը, կարգուկանոնը, օտար դեսպանների ընդունելությունը և այլն: Այս պաշտոնը տնօրինում էր Բագրատունյաց նախարարական տոհմը:

Մարդպետության գործակալությունը վերահսկում էր արքունի գանձերը, կալվածքները և բերդերը: Այն ապահովում էր արքունիքի մատակարարումը և հարեմի պահպանումը:

Մաղխազը արքայի անձնական պաշտպանն էր և արքայի թիկնապահ զորքի հրամանատարը: Մաղխազության գործակալությունը հետևում էր նաև արքունիքի անվտանգությանը: Այդ պաշտոնը ժառանգաբար անցնում էր Խոռխոռունի նախարարական տանը:

Սենեկապետության գործակալությունը վարում էր պետական գրասենյակի և դիվանի (արխիվի) գործերը: Այս գործակալությունում էին մշակվում թագավորական հրովարտակների ու արձանագրությունների տեքստերը:

Մեծ դատավորի պաշտոնը հեթանոսական ժամանակներում գլխավորում էր քրմապետը, իսկ քրիստոնեության շրջանում՝ Հայոց կաթողիկոսը: Այս գործակալությունը զբաղվում էր իրավունքի և դատարանի խնդիրներով: Մինչև քրիստոնեության ընդունումը այս պաշտոնը երկար ժամանակ վարել է Վահունիների նախարարական տոհմը:

Հայոց արքունիքում նախարարները բազմում էին բարձերի կամ գահերի վրա և, ըստ իրենց ռազմուժի մեծության և զբաղեցրած պաշտոնների կարևորության, մոտ էին նստում թագավորին: Նախարարական տոհմերը գրանցվում էին հատուկ մատյանում, որը կոչվում էր «գահնամակ»: Պետության համար կարևոր նշանակության հարցերը քննարկվում էին աշխարհաժողովում:

**Բանակը** Պետական համակարգի անբաժան մասն էր կազմում բանակը, որը բաղկացած էր արքայական և նախարարական հեծյալ ու հետևակ միացյալ զորքերից: Տիգրան Մեծի օրոք հայոց բանակի թիվը հասնում էր շուրջ 300 հազարի: Զորքի գլխավոր հարվածող ուժը զրահավորված հեծելազորն էր (այրուձին): Սակայն զորքի մեծ մասը կազմում էր հետևակը, որը համալրվում էր հայ շինականներից: Կար նաև 6000 մարտիկներից բաղկացած թա-

գավորական ընտիր հեծյալ թիկնապահ գունդ (դրանիկ): Հայկական բանակում գործածվել է սառը զենք: Բանակի ընդհանուր հրամանատարն էր սպարապետը: Հայաստանի սահմանների պաշտպանության համար ստեղծվել էին Աղձնիքի, Կորդուքի (հետագայում՝ Ծոփքի), Նոր-Շիրականի և Գուգարքի բդեշխությունները, որոնք գլխավորում էին սահմանապահ իշխանները՝ բդեշխները:

## 3. Հին հայկական մշակույթը

### (հնագույն ժամանակներից մինչև մ.թ. III դարը)

**Հայ մշակույթի ակունքները**

Հասարակության առաջընթացի որոշակի փուլում մտավոր աշխատանքը անջատվեց ֆիզիկական աշխատանքից, որն էլ ինքնըստինքյան նպաստեց մշակույթի համակողմանի զարգացմանը:

Հայ ժողովրդի կազմավորումով ձևավորվեց նաև նրա միասնական մշակույթը: Հայկական ազգային մշակույթի մեջ ձուլվեցին նաև ոչ հայկական ցեղերի մշակույթի տարրեր: Թեև հայկական մշակույթը ժամանակի ընթացքում ենթարկվել է փոխազդեցությունների, սակայն պահպանել է իր ազգային ինքնատիպությունը: Հայկական պետականության առաջացումն ու հզորացումը նպաստեցին հայ մշակույթի զարգացմանը: Դրա դրսևորման ուրույն ու բարձր աստիճան էր Արարատյան թագավորության մշակույթը, որի անմիջական կրողն ու ժառանգորդն էր հայ ժողովուրդը:

Դժբախտաբար, մենք շատ քիչ բան գիտենք հին Հայաստանի մշակույթի մասին, քանզի IV դարի սկզբում, Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո, գործնականում ոչնչացվեցին նախաքրիստոնեական մշակութային շատ արժեքներ:

**Առասպելներն ու վիպական երգերը**

Նախաքրիստոնեական (հեթանոսության) շրջանում տարածված է եղել ժողովրդական բանահյուսությունը, պատմավիպական վիպերգությունը: Դրանցից առանձնանում են հատկապես «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տորք Անգեղ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Սաթենիկ» և ուրիշ առասպելներ ու վիպական զրույցներ: Դրանք, ինչպես և ժողովրդական բանահյուսության ուրիշ գոհարներ, մեզ է հասցրել V դարի պատմիչ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» գրքում:

**Նյութական մշակույթը** Ալ. Մակեդոնացու արշավանքներից և Աքեմենյան Պարսկաստանի անկումից հետո Արևելքում ու Հայաստանում սկսվեց «հելլենիզմի», այսինքն՝ «հունականության» դարաշրջանը: Հայկական հարուստ մշակույթը յուրացրեց այն առաջադիմականը, որը կար հունական մշակույթում: Լայն տարածում ստացան հունարեն լեզուն, գրականությունը, արվեստը, քաղաքաշինությունը: Հունական առաջավոր մշակույթի և հայ մշակույթի սինթեզից առաջացավ հայկական հելլենիստական մշակույթը: Հելլենիստական մշակույթը զարգանում էր առավելապես քաղաքներում: Հելլենիզմի դարաշրջանի քաղաքաշինության գլուխգործոցներն էին Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները: Արտաշատի, Գառնիի, Արմավիրի, Վաղարշապատի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ բարձրարվեստ իրեր, մարմարյա և կավե արձաններ ու արձանիկներ, զենք ու զրահ, ոսկուց և արծաթից պատրաստված բազմատեսակ զարդեր, խեցե գեղարվեստական իրեր, ապակեղեն և այլն: Հայաստանում կառուցվել են անառիկ ամրոցներ, պալատներ, տաճարներ, թատրոններ, կամուրջներ, հյուրանոցներ, բաղնիքներ: Օրինակ, Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը հասնում էր 25 մետրի, և դրանք ունեցել են այնպիսի լայնություն, որ ներսում տեղավորվել են զորանոցներ, ախոռներ և այլն:

Հելլենիստական դարաշրջանի ճարտարապետության թագն ու պսակն է Գառնիի հեթանոսական տաճարը (մ.թ.ա. I դար): Հայտնի է նաև Գառնիի թագավորական ամրոցը՝ իր հզոր պարիսպներով, պալատներով, տաճարներով և այլ շինություններով: Պալատի մոտակայքում է գտնվում խճանկար հատակով բաղնիքը (մ.թ. III դար):

Ներկայումս Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում պահպանվել են հեթանոսական աստվածների՝ Արամազդի, Վահագնի, Միհրի հսկայական արձանները: Հատկապես գեղեցիկ է Անահիտ դիցուհու աշխարհահռչակ բրոնզե գլուխը, որը պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Այն կերտված է գեղարվեստական բարձր ճաշակով ու մեծ վարպետությամբ: Շատ գեղեցիկ են Արտաշեսյան թագավորներ Տիգրան Մեծի և նրա որդի Արտավազդ II-ի հատած դրամները:

**Հեթանոսական կրոնը** Մինչև 301 թ.՝ Հայաստանում քրիստոնեության ընդունումը, հայ ժողովրդի մեջ տարածված էր հեթանոսական կրոնը (բազմաստվածությունը), պաշտել են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ աստվածների, որոնք կազմել են դիցարան (պանթեոն):

Հայերն ունեցել են հեթանոս աստվածների երկու դիցարան: Առաջին՝ հին դիցարանի գլխավոր աստվածն էր Հայկը՝ երկրի, երկնքի և բարիքներ ստեղծող աստվածը: Հայկը համարվել է նաև հայ ժողովրդի նախահայրը: Հին դիցարանի աստվածներն էին Արան՝ գեղեցկության, բուսականության, մահվան և հարության, Տորքը՝ ճարտարապետության, Ծովինարը՝ ջրի, անձրևի, Արալեզը՝ սպանված զինվորի վերակենդանացման և այլն:

Հետագայում հայ դիցարանը, պարսկական զրադաշտական կրոնի ազդեցությամբ, կրում է փոփոխություններ: Հանդես են գալիս նոր աստվածներ, չնայած հին աստվածների պաշտամունքը դրանից հետո էլ երկար ժամանակ պահպանվում է ժողովրդի մեջ: Նոր դիցարանի գլխավոր աստվածն էր Արամազդը՝ աստվածների հայրը, երկնքի և երկրի արարիչը: Նա փոխարինում է Հայկին ու Խալդին: Արամազդի տաճարը գտնվում էր Դարանաղյաց գավառի Անի ամրոցում: Այստեղ էին գտնվում նաև հայոց արքաների դամբարանները:

Նոր դիցարանի ամենասիրելի աստվածուհին Արամազդի դուստր Անահիտն էր, որ պարսկերեն նշանակել է մաքուր, անբիծ: Անահիտը համարվում էր հայոց երկրի հովանավոր դիցուհին՝ պտղաբերություն ու մայրություն արգասավորողը: Նա միակ աստվածն է, որ ունեցել է ոսկեձույլ արձան: Բայց այդ արձանը մեզ չի հասել: Անտիկ հեղինակ Պլինիոս Ավագը հաղորդում է, որ հռոմեական զորավար Անտոնիոսը իր արշավանքների ժամանակ ջարդուփշուր արեց Անահիտի արձանը (Եկեղյաց գավառում) ու ոսկին բաժանեց իր և զորականների միջև: Նոր դիցարանի մյուս հայտնի աստվածն էր Վահագնը, որը համարվում էր քաջության, ուժի, պատերազմի, ամպրոպի աստվածը: Հեթանոսական մյուս աստվածներն էին Աստղիկը՝ սիրո և գեղեցկության, Միհրը՝ արեգակի, կրակի, լույսի, Տիրը՝ դպրության, ճարտարապետության, Նանեն՝ իմաստության, մայրության և օջախի պահապան աստվածուհին, Ամանորը՝ Նոր տարվա, Վանատուրը՝ հյուրընկալության, օթևանի և այլն: Հավանաբար հայ ժողովրդի ազգային խառնվածքին այնքան բնորոշ հյուրասիրության բարձր զգացումը մեծ չափով կապված է եղել Վանատուրի պաշտամունքի հետ: Ինչ վերաբերում է Աստղիկ դիցուհու պաշտամունքին, ապա պետք է ասել, որ նրա հետ է կապված մինչև օրս նշվող Վարդավառի տոնը: Աստղիկը Վահագնի սիրուհին էր: Իբրև սիրո աստվածուհի, Աստղիկը օժտված էր հմայիչ գեղեցկությամբ: Ժողովրդի մեջ պահպանված ավանդական մի զրույցում պատմվում է, որ Աստղիկը սովորություն

ուներ գիշերները լոգանք ընդունելու Արածանիի կիրճի իր լողարանում: Հայ կտրիճները, նրա մերկությունը տեսնելու և նրա գեղեցկությամբ զմայլվելու համար, լեռների լանջերին, դարան մտած, կրակ վառելով, փորձել են դիտել դիցուհուն, բայց աստվածուհին, տղաների տարփոտ հայացքներից քողարկվելու համար, մշուշ է տարածել հովտում, որից էլ այդ վայրը կոչվել է Մուշ:

Հելլենիզմի դարաշրջանում հայ իրականության մեջ տարածվում է նաև հունական դիցաբանությունը: Հայկական դիցարանի աստվածները համեմատվել ու նույնացվել են հունական համապատասխան աստվածների հետ: Այսպես, Արամազդը նույնացվել է Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Վահագնը՝ Հերակլեսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Միհրը՝ Հելիոսի, Տիրը՝ Ապոլոնի, Նանեն՝ Աթենասի հետ և այլն:

**Գրականությունը և թատրոնը**

Հայոց լեզուն ունի հազարամյակների պատմություն, սակայն հայկական տառերը ստեղծվել են միայն V դարում: Մինչ հայերեն գրերի ստեղծումը հայերը գրել են հունարեն, հին պարսկերեն, արամեերեն և այլ լեզուներով: Հայտնաբերվել են բազմաթիվ վիմագրեր՝ քարերի վրա գրված արձանագրություններ:

Գրական առաջին հայ դեմքը, որի մասին մեզ տեղեկություն է հասել, Արտաշես I արքայի որդի Վրույրն է (մ.թ.ա. II դար), որին Խորենացին անվանում է «այր իմաստուն և բանաստեղծ»: Գրականության ավելի խոշոր ներկայացուցիչ է համարվում Արտավազդ II արքան (մ.թ.ա. I դար), որը գրել է պատմական երկեր, ճառեր և ողբերգություններ: Սակայն դրանք մեզ չեն հասել:

Հայ ժողովուրդը ավանդաբար մեծ սեր է ունեցել թատրոնի նկատմամբ: Դեռևս երկու հազար տարի առաջ Հայաստանում գոյություն է ունեցել թատրոն: Հելլենիզմի շրջանում թատերական կյանքի խոշոր օջախներ էին Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները: Տիգրան II-ը Տիգրանակերտում կառուցել էր տասնյակ հազարանոց հանդիսատեսներ տեղավորող թատերական շենք (ամֆիթատրոն) և Հայաստան էր հրավիրել հույն անվանի դերասանների: Տիգրան արքայի թատերական արվեստին ցուցաբերած հովանավորությունը շարունակել է նրա որդի Արտավազդը: Հիշենք մ.թ.ա. 53 թ. Արտաշատում տրված Եվրիպիդեսի «Բաքոսուհիները» թատերական ներկայացումը: Իր հերթին, Արտավազդն էլ է գրել պիեսներ, որոնք ներկայացվել են հույն հեղինակների ստեղծագործությունների կողքին:

Այսպիսով, հին Հայաստանի թե՛ նյութական և թե՛ հոգևոր մշակույթը հասել էր բարձր մակարդակի և դարձել այն հիմքը, որի վրա հաջորդ դարաշրջանում պետք է ծաղկեր միջնադարյան հայ ազգային հարուստ մշակույթը:

## 4. Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Քրիստոնեության ընդունումը

**Ավատական հողատիրության ձևավորումը**

III-IV դարերում համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցան հասարակական մեծ տեղաշարժեր թե՛ տնտեսության, թե՛ մշակույթի, թե՛ կրոնի և թե՛ պետական կառուցվածքի կազմակերպման բնագավառներում: Ինչպես անտիկ ստրկատիրական դասական երկրներ համարվող Հռոմում ու Հունաստանում, այնպես էլ Մերձավոր Արևելքում ու Հայաստանում ստրկատիրական հարաբերությունները քայքայվում են, և դրանց փոխարինելու է գալիս ավատատիրական (ֆեոդալական) հասարակարգը: Հայաստանում այդ անցումն ավելի արագ կատարվեց այն պատճառով, որ ստրկատիրությունը մեզանում առանձնապես խոր արմատներ չէր ձգել:

Աստիճանաբար ձևավորվում է ավատատերերի (ֆեոդալների) դասը, որը տարբեր ճանապարհներով տիրում է համայնական գյուղացիների՝ շինականների հողերին և նրանց գցում կախման մեջ:

Հայաստանում ֆեոդալական հողատիրության բնորոշ կողմերից մեկն այն էր, որ դարեր շարունակ, ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, համայնական գյուղացու կախումը հողատիրոջից արտահայտվել է ոչ թե անձնական կախվածության, գյուղացու՝ հողին ամրացվելու (ինչպես եղել է Ռուսաստանում), այլ հարկեր ու տուրքեր գանձելու և պարհակներ կատարելու ձևով: Այդ ընթացքում գյուղացին ունեցել է որոշակի ինքնուրույնություն և ազատ տեղաշարժման իրավունք: Այսինքն, Հայաստանում, ըստ էության, բացակայել են ֆեոդալիզմին բնորոշ ճորտատիրական հարաբերությունները կամ դրսևորվել են շատ թույլ ձևով:

Բացի այդ, Հայաստանում հետագա դարերի ընթացքում սոցիալ-դասակարգային ներհակությունները սրությամբ չեն դրսևորվել: Հայ ժողովրդի աշխարհաքաղաքական յուրահատուկ վիճակը (անկախ պե-

տականությունը ժամանակ առ ժամանակ կորցնելը, միջազգային ճանապարհների խաչմերուկների վրա գտնվելը, օտար նվաճողների պարբերական ասպատակությունները և այլն) հարկադրել է նրան ավելի շատ հոգ տանել ազգային հավաքականության ու ինքնապաշտպանության, ներհամայնքային խնդիրների ուղղությամբ, քան խորացնել սոցիալ-դասակարգային ճնշումն ու հարստահարումը:

Ամենախոշոր հողատեր-ավատատերը թագավորն էր: Նրա կալվածքները տարածվում էին Արարատյան դաշտում, Տարոնում, Կոգովիտում, Բարձր Հայքում և այլուր: Արքունի կալվածքները կոչվում էին ոստան: Խոշոր ավատատերը կոչվում էր իշխան կամ նախարար, իսկ նրանց տիրույթները՝ իշխանություն կամ նախարարություն: Նախարարական իշխանությունը ժառանգական էր: Նախարարի որդին կոչվում էր սեպուհ: Ամեն մի նախարարություն ուներ իր զորաջոկատը, զինանշանը և դրոշը: Խոշոր հողային սեփականության տեր են դառնում նաև եկեղեցին ու հոգևորականությունը:

Հայաստանում գոյություն են ունեցել ավատական հողատիրության երեք հիմնական ձևեր՝ «հայրենիք», «պարգևանք» և «գանձագին» կամ «դրամագին»: «Հայրենիք» կոչվում էին այն հողերը, որոնք նախարար-ֆեոդալը, ստանալով թագավորից, օգտագործում էր ժառանգական սեփականատիրության իրավունքով: «Հայրենիք» հողատիրության ձևը նմանվում կամ նույնանում էր արևմտաեվրոպական «դոմենին» և ռուսական «վոտչինային»:

Զինվորականներին և մյուս պետական պաշտոնյաներին իրենց ծառայության համար որպես ռոճիկ տրված հողերը կոչվում էին «պարգևական»: Սա ժառանգական չէր, այլ ցմահ: «Պարգևանքը» հիշեցնում էր արևմտաեվրոպական «լենը», «բենեֆիսիումը» և ավելի ուշ Արևելյան Հայաստանում տարածված հողատիրության «թիուլ» կոչվող ձևը: «Պարգևանքի» տերերը կազմում էին մանր ավատատեր-հողատերերի կարգախումբը: Իսկ հողերի այն տեսակը, որը ձեռք էր բերվում գնելու միջոցով, կոչվում էր «գանձագին» կամ «դրամագին»:

Այսպիսով, III-IV դարերում Հայաստանում ձևավորվեց ավատական հողատիրությունը:

**Քրիստոնեության ընդունումը**

IV դարի սկզբին, Տրդատ III-ի թագավորության օրոք (298-330 թթ.), տեղի ունեցավ պատմական նշանակություն ունեցող մի իրադարձություն՝ Հայաստանում քրիստոնեությունը ընդունվեց որպես պետական կրոն:

Քրիստոնեությունը սկիզբ է առել Հրեաստանում մ.թ. I դարում և մեծ դժվարությամբ ճանապարհ է հարթել իր գաղափարների տարածման ու հաղթանակի համար: Քրիստոնեությունը սկզբում ճնշվածների կրոնն էր, իսկ հետո ծառայեցվում էր իշխող դասակարգերի շահերին: Հայաստանում քրիստոնեական վարդապետության առաջին տարածողներն են եղել Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից՝ սուրբ Թադևոս և սուրբ Բարդուղիմեոս առաքյալները՝ I դարում: Իրենց հավատքի ու քարոզչական գործունեության համար այս երկու սուրբ հայրերը հայոց Սանատրուկ թագավորի հրամանով նահատակվում են: Առաջին առաքյալ քարոզիչների անունով էլ հայ եկեղեցին կոչվում է «առաքելական»: Չնայած հետապնդումներին ու հալածանքներին՝ II և III դարերում քրիստոնյաների թիվը Հայաստանում գնալով աճում էր:

Տրդատ III-ը սկզբում խիստ հալածում էր քրիստոնյաներին: Նա տանջահար է անում և Խորվիրապի բանտը նետում Անակ Պարթևի որդի Գրիգորին (Լուսավորչին) (252-325 թթ.), նահատակել է տալիս Հռոմեական կայսրությունից Հայաստան ապաստանած կույս Հռիփսիմեին և նրա ընկերուհիներին: Սակայն շուտով Տրդատ թագավորի վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ փոխվում է: Նա բանտից ազատում է Գրիգոր Լուսավորչին, հրաժարվում է հեթանոսությունից և 301 թ. քրիստոնեությունը հայտարարում է պետության պաշտոնական կրոն: Այսպիսով, Հայաստանը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որտեղ քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն: Ի դեպ, 2001 թ. մեծ հանդիսավորությամբ տոնվեց այդ դարակազմիկ իրադարձության 1700-ամյակը: Միլանի հրովարտակով (էդիկտով) Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը պաշտոնական կրոն ճանաչվեց միայն 313 թ.:

Ագաթանգեղոս պատմիչը նկարագրում է, որ քրիստոնեությունը արմատավորելիս մեծ ավերածություններ կատարվեցին՝ ավերվեցին հեթանոսական տաճարներ և աստվածների արձաններ, կոտորվեցին քրմեր և հեթանոս շատ հավատացյալներ, ոչնչացվեցին մշակութային շատ արժեքներ: Հեթանոսական տաճարների ու մեհյանների տեղերում կառուցվեցին քրիստոնեական եկեղեցիներ ու սրբավայրեր, իսկ դրանց հողերն անցան եկեղեցուն: 303 թ. Վաղարշապատում հիմնադրվեց Ս. Էջմիածնի մայր տաճարը, որը դարձավ հայոց հոգևոր կենտրոնը: Հեթանոսությունը մեծ դժվարությամբ էր իր տեղը զիջում

նոր կրոնին: Եվ պատահական չէ, որ հեթանոսական որոշ ծեսեր ու սովորություններ, օրինակ, «Մատաղը», «Վարդավառը», «Տյառնընդառաջը» (Տրընդեզ) և այլն, պահպանվեցին և փոխանցվեցին քրիստոնեական եկեղեցուն:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը կարգվում է հայոց առաջին կաթողիկոս և կազմակերպում եկեղեցական համակարգը: Նշենք, որ մինչև Պապ թագավորը, հայոց կաթողիկոսը ձեռնադրվում էր դրսում՝ Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: 325 թ. Փոքր Ասիայի Նիկիա քաղաքում գումարվում է քրիստոնյա աշխարհի Տիեզերական առաջին ժողովը, որին հայերի կողմից մասնակցում է Ս. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակես եպիսկոպոսը: Նիկիայի տիեզերական ժողովը սահմանում է քրիստոնյաների հավատո հանգանակը (կրեդոն) և հոգևոր ծիսական կանոնները: Հայոց եկեղեցին հետզհետե դառնում է երկրի իշխող գաղափարական ուժը, միաժամանակ՝ խոշոր հողատեր-ավատատեր: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին կոչվել է «լուսավորչական» և «Գրիգորյան»՝ այդ եկեղեցու առաջին քարոզիչ ու հիմնադիր Գրիգոր Լուսավորչի անվան բաղադրիչներով: Անուրանալի է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դերը երկրի միասնության ու անկախության, հայ ազգի, լեզվի, կրթության, գիտության ու մշակույթի պահպանման ու զարգացման գործում: Եվ պատահական չէ, որ քրիստոնեության ընդունումից հետո (հետագա դարերում, ընդհուպ մինչև XVIII-XIX դդ.) հայ գրականության, կրթության, գիտության և այլ բնագավառների ներկայացուցիչները գերազանցապես եղել են հոգևորականներ:

Այսպիսով, քրիստոնեության ընդունումը շրջադարձային իրադարձություն եղավ հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում և էական նշանակություն ունեցավ քաղաքակրթության արժեքներին նրա հաղորդակցվելու գործում: Քրիստոնեության ընդունումով Հայաստանը քաղաքականապես ու մշակույթով ավելի է կապվում Հռոմեական կայսրության հետ: Իսկ դրան հակառակ՝ սրվում են հարաբերությունները Սասանյան Պարսկաստանի հետ:

Հռոմի հետ Հայաստանի կապն ավելի ուժեղացավ, երբ 330 թ. մայիսին հռոմեական Կոստանդին I Մեծ կայսրն իր մայրաքաղաքը Հռոմից տեղափոխեց Բյուզանդիոն, որն էլ նրա պատվին վերանվանվեց Կոստանդնուպոլիս: Ավելի ուշ՝ 395 թ., Հռոմեական կայսրությունը

վերջնականապես բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան Հռոմեական կայսրություն՝ Հռոմ կենտրոնով, և Արևելյան Հռոմեական կայսրություն (որը կոչվեց նաև Բյուզանդիա)՝ Բյուզանդիոն կամ Կոստանդնուպոլիս կենտրոնով:

## 5. Պայքար հայկական պետականության պահպանման համար IV դարում: Արշակ II

**Հայաստանը Խոսրով Կոտակի և Տիրանի օրոք**

Տրդատ Մեծի մահից հետո գահ է բարձրանում նրա որդի Խոսրով III-ը (330-338 թթ.), որը կարճահասակ լինելու պատճառով կոչվել է Կոտակ: Նրա օրոք մի քանի նախարարական տոհմեր (Մանավազյան, Որդունի, Բզնունի) ապստամբում են կենտրոնական իշխանության դեմ՝ ձգտելով ներքին լիակատար ինքնուրույնության: Խոսրով Կոտակը դաժանորեն ճնշում է կենտրոնախույս նախարարների ելույթները և կոտորում այդ տոհմերի բոլոր տղամարդկանց: Նրանց տիրույթները բռնագրավվում են և հանձնվում եկեղեցուն:

Խոսրով III-ի օրոք Հայաստանը ենթարկվեց մերձկասպյան մազքութ ցեղերի ասպատակությանը: Սպարապետ Վաչե Մամիկոնյանին հաջողվեց ջախջախել և դուրս քշել թշնամուն: Խոսրովի կարճատև թագավորությունը նշանավորվեց շինարարական գործունեությամբ: Նա Արտաշատից ոչ հեռու գտնվող մի բլրի վրա հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ Դվինը: Նոր մայրաքաղաքի հիմնադրման պատճառն այն էր, որ Արաքսի վտակ Մեծամոր գետի հունը փոխվել էր, և Արտաշատի շուրջը ճահիճներ էին առաջացել, օդը դարձել էր վատառողջ: Խոսրովը կատարել է նաև արհեստական անտառատունկ: Նրա օրոք Գառնիից մինչև Դվին, Ազատ գետի երկու կողմերում, անտառ տնկվեց, որը պահպանվում է մինչև օրս և հայտնի է «Խոսրովի անտառ» անունով:

Խոսրով արքայի խաղաղ, շինարարական գործունեությունը շարունակվեց այնքան ժամանակ, քանի դեռ ուժի մեջ էր Մծբինի 298 թ. պայմանագիրը: Սակայն, երբ պայմանագրով նախատեսված 40-ամյա խաղաղության ժամկետն անցավ, Սասանյան արքայից արքա Շապուհ II Երկարակյացը (310-379 թթ.) պատերազմ սկսեց Հռոմեական Կայսրության ու Հայաստանի դեմ: Հենց այդ ժամանակ

էլ՝ 338 թ. մահացավ Խոսրով Կոտակը, և նրան հաջորդեց որդին՝ Տիրանը (338-350 թթ.):

Տիրանի և նրա հաջորդների օրոք հայկական պետականության ամրապնդման և հայերի քաղաքական կողմնորոշման խնդրում բացորոշ կերպով դրսևորվել են երեք հոսանք: Հայ ավագանու մի մասը հակված էր դեպի Պարսկաստանը, իսկ մյուս մասը, հայոց եկեղեցու հետ միասին, դեպի Հռոմեական կայսրությունը: Հայ քաղաքական շրջաններում գոյություն ուներ նաև մի այլ՝ երրորդ հոսանք, որը հավասարապես դեմ էր թե՛ պարսկական և թե՛ հռոմեական կողմնորոշմանը ու գտնում էր, որ հայ ժողովուրդը պետք է հույսը դնի իր վրա: Այս տեսակետի գաղափարակիրն էր խոշոր քաղաքական ու պետական գործիչ Հայր Մարդպետը: Նա պայքարում էր հայ կենտրոնախույս նախարարների դեմ և գտնում, որ Հայաստանը պետք է վարի ինքնուրույն քաղաքականություն և ջանա ամրապնդել հայոց անկախ պետականությունը:

Տիրանի գահակալության տարիներին կենտրոնախույս ձգտումներ ունեցող նախարարները վերսկսեցին պառակտողական գործունությունները: Թագավորի հետ գժտվեց նաև կաթողիկոսը: Սպանվեց Հուսիկ կաթողիկոսը: Այս իրավիճակից օգտվելով՝ պարսից Շապուհ արքան իր մոտ՝ մայրաքաղաք Տիզբոն է կանչում Տիրանին և կուրացնել տալիս:

**Արշակ II-ի ներքին և արտաքին քաղաքականությունը**

Տիրանին հաջորդում է նրա որդի Արշակ II-ը (350-368 թթ.): Լինելով ուժեղ ու հաստատակամ անձնավորություն, նա կարողանում է վարել անկախ ու ինքնուրույն քաղաքականություն և կայունացնել Հայաստանի ներքին ու արտաքին վիճակը: Վերականգնվում է հայ-հռոմեական դաշինքը, որն ամրապնդվում է Արշակ II-ի և Օլիմպիայի ամուսնությամբ: Մեծ ջանքեր են թափվում նաև պառակտված նախարարներին հաշտեցնելու ուղղությամբ: Սպարապետ է նշանակվում Վասակ Մամիկոնյանը, իսկ կաթողիկոս՝ Ներսես I-ին Մեծը (353-372 թթ.): Ներսես կաթողիկոսի օրոք Հայաստանում ամրապնդվում է քրիստոնեական հավատը:

354 թ. Տարոնի գավառի Աշտիշատ ավանում տեղի է ունենում հայ եկեղեցու առաջին օրենսդիր ժողովը: Աշտիշատի ժողովը ընդունում է թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ կյանքին վերաբերող բազմաթիվ կանոններ: Արգելվում են, մասնավորապես, հեթանոսական ժա-

մանակներից հարատևած բազմակնությունը, մերձավոր հարազատների և անչափահասների ամուսնությունը, թաղումների ժամանակ կատարվող մարմնական վնասները, անվայելուչ լացուկոծը: Որոշվում է կառուցել վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ և այլն:

Արշակ II-ը Մասիս լեռան հարավային կողմում՝ Կոգովիտ գավառում, կառուցում է Արշակավան քաղաքը և հրավիրում է բոլոր ցանկացողներին, այդ թվում՝ կախյալ և փախստական բնակիչներին, գալ և բնակություն հաստատել նորահիմն քաղաքում, ինչը հասկանալի դժգոհություն է առաջացնում նախարարների շրջանում: Վերջիններս, օգտվելով թագավորի բացակայությունից, միացյալ ուժերով, Ներսեհ Կամսարականի գլխավորությամբ, հիմնահատակ կործանում են քաղաքը և սրի քաշում բնակչությանը: Արշակավանի ավերումը, ինչ խոսք, մեծ հարված էր հայոց թագավորի հեղինակությանը:

Սյունյաց Անդովկ իշխանի դուստր Փառանձեմը ամուսնացել էր Արշակ II-ի եղբորորդի Գնելի հետ: Սակայն շուտով Գնելը սպանվում է իր եղբայր Տիրիթի բանսարկությամբ: Թագավորի միջամտությամբ սպանվում է նաև Տիրիթը: Փառանձեմը դառնում է Արշակ II-ի կինը՝ Հայոց թագուհի: Այս հանգամանքը ևս թուլացնում է թագավորի դիրքերը:

Առանձին իշխաններ՝ Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին, դիմելով դավաճանական քայլի, անցնում են Շապուհ II-ի կողմը: Լարված էին նաև թագավորի և եկեղեցու հարաբերությունները:

Հենց այս խառնակ ժամանակ՝ 359 թ., Շապուհ II-ը որոշեց վերջնականապես նվաճել Հայաստանը և դարձնել իր տերության մարզերից մեկը: Սակայն հայոց զորքը, սպարապետ Վասակ Մամիկոնյանի հրամանատարությամբ, կարողանում է հաղթանակներ տանել թշնամու դեմ: Դրանից հետո Շապուհը, տեսնելով, որ միայն զենքի ուժով չի կարողանում հասնել իր նպատակին, դիմում է խորամանկության: Նա Տիզբոն է հրավիրում Արշակին և Վասակին՝ իբր վիճելի հարցերը կարգավորելու և հաշտություն կնքելու: Վասակը գլխատվում և մորթազերծ է արվում, իսկ Արշակը նետվում է Անհուշ բերդը, ուր և շուտով մահանում է:

Արշակի և Վասակի վախճանից հետո Հայաստանի համար ստեղծվում է ծանր կացություն: Պարսկական զորքերը, հայ առանձին դավաճան նախարարների օժանդակությամբ, ներխուժում են Հայաստան, կողոպտում ու ավերում երկիրը: Այդ ծանր պահին պետության

ղեկն իր ձեռքն է վերցնում Փառանձեմ թագուհին, որն Արշակի կինն էր դարձել Օլիմպիայի մահից հետո: Թագուհուն օգնում է Վասակի որդին՝ Մուշեղ Մամիկոնյանը: Պարսիկներին հերոսական դիմադրություն է ցույց տալիս Արտագերս ամրոցը: Երկարատև՝ 14-ամսյա պաշարումից հետո, ի վերջո, թշնամին գրավում է ամրոցը և անմարդկային խոշտանգումներից հետո սպանում Հայոց թագուհուն:

## 6. Հայաստանը Պապի գահակալության տարիներին: Արշակունյաց թագավորության անկումը

**Պապ Արշակունու գահակալությունը: Ձիրավի ճակատամարտը**

Պարսից Շապուհ արքան, նենգաբար ձերբակալելով և սպանելով հայոց թագավոր Արշակ II-ին ու սպարապետ Վասակ Մամիկոնյանին, նոր արշավանքներ կազմակերպեց Հայաստանի դեմ և մեծ ավերածություններ ու ահավոր աղետներ պատճառեց երկրին: Հայ ժողովուրդը, այլևս չտանելով օտարի ասպատակություններն ու ստորացումները, կրկին ոտքի ելավ իր ազատության և անկախության համար: Այդ համաժողովրդական պայքարը գլխավորեցին Հռոմից Հայաստան վերադարձած թագաժառանգ Պապը և Վասակ Մամիկոնյանի որդի սպարապետ Մուշեղը: Հռոմի Վաղես կայսեր օգնությամբ Պապը հաստատվում է հայոց գահին (370-374 թթ.): 371 թ. Շապուհը, չհանդուրժելով Հռոմի կողմից Պապին հայոց թագավոր կարգելը, մի նոր արշավանք է ձեռնարկում դեպի Հայաստան: Նույն թվականին հայ-հռոմեական միացյալ զորքերը Ձիրավի դաշտում, Նպատ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեցին և Հայաստանից վտարեցին պարսից զորքերին: Այս կռիվների ժամանակ բռնվեցին և իրենց արժանի պատիժն ստացան նաև դավաճան հայ նախարարները:

**Պապի ներքին և արտաքին քաղաքականությունը**

Ձիրավի ճակատամարտում տարած հաղթանակն էլ ավելի ամրապնդեց Պապ թագավորի դիրքերը: Նա, չնայած իր երիտասարդ տարիքին, սկսեց վարել ակտիվ ու եռանդուն արտաքին ու ներքին քաղաքականություն՝ ձգտելով խաղաղ ու բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես

Հռոմի, այնպես էլ Սասանյան Պարսկաստանի հետ: Պապը ջանում էր ամրապնդել հայկական պետության հիմքերը: Այդ նպատակով նա հզորացրեց բանակը՝ զինվորների թիվը հասցնելով 90 հազարի, սահմանափակեց եկեղեցական հողատիրությունը, հարկերը, հոգևորականների արտոնությունները, փակել տվեց կուսանոցների մեծ մասը և այլն: Պապի այս ձեռնարկումները, բնականաբար, առաջ էին բերում հոգևորականության դժգոհությունը: Եվ պատահական չէ, որ հայ քրիստոնյա պատմիչները, միտումնավոր, բացասական գծեր են վերագրել Պապին: Իրականում նա եղել է հավասարակշռված, գործունյա և ինքնատիպ քաղաքական գործիչ:

Պապը վերագրավեց և թագավորությանը միացրեց Հայաստանից անջատված ծայրագավառները: Նա զբաղվեց ավերված քաղաքների վերականգնման ու շինարարական աշխատանքներով: Արտաքին քաղաքականության բնագավառում Պապի նպատակն էր բարելավել հարաբերությունները նաև Պարսկաստանի հետ, մի հանգամանք, որը դուր չէր գալիս հռոմեասեր Ներսես I կաթողիկոսին և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին: Միաժամանակ, նա աշխատում էր Հայաստանից դուրս հանել հռոմեական կայազորները, որոնք հաճախակի միջամտում էին երկրի ներքին գործերին:

Պապը համարձակ քայլ կատարեց հայ եկեղեցին հունադավան եկեղեցու կախվածությունից դուրս բերելու ուղղությամբ: 372 թ., երբ մահացավ Ներսես Մեծը, որին, ի դեպ, ոմանք կարծում են, թե իբր թունավորել է թագավորը, նորընտիր կաթողիկոսը այլևս չուղարկվեց Կեսարիա, այլ ձեռնադրվեց տեղում:

Պապ թագավորի՝ ինքնուրույն և հայկական պետականության հիմքերի ամրապնդմանը միտված քաղաքականությունը թշնամաբար ընդունեց Հռոմը: Իսկ երկրի ներսում Պապի նկատմամբ թշնամաբար են տրամադրվում թե՛ եկեղեցականները և թե՛ նախարարների զգալի մասը: Եվ 374 թ., Հռոմի կայսեր հանձնարարությամբ, խնջույքի ժամանակ դավադրաբար սպանվում է հայոց թագավորը: Պապի սպանությունից հետո Մեծ Հայքի թագավորությունը սկսում է թուլանալ և անկում ապրել:

**Հայաստանի առաջին բաժանումը: Արշակունյաց թագավորության անկումը**

Պապից հետո հռոմեացիները հայոց գահին նստեցրին նրա ազգական, հռոմեասեր Վարազդատին (374-378 թթ.), որը Հռոմում աչքի էր ընկել որպես օլիմպիական խաղերի հաղթող: Բայց, լինելով քաղաքականապես ան-

հեռատես ու միամիտ մարդ, շուտով վտարվում է Հայաստանից: Դրանից հետո Հայաստանում թագավոր է ճանաչվում Պապի փոքրահասակ որդի Արշակ III-ը (378-386 թթ.), որի խնամակալն է դառնում սպանված Մուշեղ Մամիկոնյանի եղբայր Մանվել Մամիկոնյանը:

387 թ. Հռոմի կայսրը և Պարսկաստանի թագավորը համաձայնության են գալիս և Հայաստանը բաժանում իրենց միջև: Սա Հայաստանի առաջին բաժանումն էր: Այդ բաժանումով Հայաստանի մեծագույն մասն անցավ Պարսկաստանին, ուր վասալական կախմամբ միաժամանակ (40 տարի) շարունակեց գոյատևել Արշակունյաց թագավորությունը: Հայաստանի հենց այս հատվածում, V դարի սկզբին՝ Վռամշապուհ թագավորի օրոք (388-414 թթ.), տեղի ունեցավ մեծագույն նշանակություն ունեցող մի իրադարձություն՝ հայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական գրերը, որը անկախ պետականության կորստի պայմաններում դարձավ հզոր զենք՝ հայ ազգի, լեզվի ու մշակույթի պահպանման ու զարգացման համար:

387 թ. բաժանումով Հայաստանի արևմտյան մի քանի գավառներ անցնում են Հռոմի գերիշխանության տակ: Հռոմին ենթակա մասում շուտով՝ 391 թ. վերացվում է Հայոց թագավորությունը և այն դառնում է կայսրության մի երկրամաս (պրովինցիա): Իսկ 428 թ. պարսիկները գահընկեց են անում հայ Արշակունիների արքայատոհմի վերջին թագավոր Արտաշեսին (Արտաշիր) (422-428 թթ.) և Հայաստանը դարձնում իրենց տերության մարզերից մեկը: Այժմ արդեն երկիրը կառավարվում էր ոչ թե թագավորի կողմից, այլ մարզպանի, որին նշանակում էր պարսից արքայից արքան: Հայոց մարզպանը եղել է ազգությամբ հայ կամ պարսիկ: Սկսվում է հայոց պատմության, այսպես կոչված, մարզպանության շրջանը:

Այդ նույն ժամանակ Պարսկաստանի ենթակայության տակ էին գտնվում նաև Վրաստանը և Աղվանքը (ներկայիս Ադրբեջանի տարածքը): Այս երկրներում էլ մտցվեց մարզպանական կառավարում: V դարում քաղաքական, տնտեսական և վարչական նկատառումներով Սասանյանները Մեծ Հայքի առանձին ծայրամասային նահանգները միացրեցին հարևան երկրների մարզպանություններին: Այսպես, Գուգարքի նահանգի մեծ մասը միացվեց Վրաստանին, Արցախը և Ուտիքը՝ Աղվանքին, Փայտակարանը՝ Ատրպատականին և այլն: Նման կամայական վարչատարածքային փոփոխություններն էլ հետագայում

անդրկովկասյան ժողովուրդների միջև սահմանավեճերի նախահիմք դարձան:

Այսպիսով, կորսվեց հայկական հերթական արքայատոհմը: Հայ ժողովուրդը երկար ժամանակով մինչև IX դար, կորցնում է իր պետական անկախությունը: Անկասկած, հայկական թագավորության անկումն ուներ իր ներքին և արտաքին պատճառները: Այդուհանդերձ, հետագա դարերում հայոց պետականության շատ հատկանիշներ պահպանվեցին:

# ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

# ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ (V-XVIII ԴԴ.)

V դարը համարվում է սահմանագիծ «հին» և «միջին» դարերի միջև: Նախ, համաշխարհային պատմության մասշտաբով, V դարի երկրորդ կեսին կործանվեցին համաշխարհային քաղաքակրթության խոշորագույն կենտրոնն ու կրողը հանդիսացող Հռոմն ու Արևմտյան հռոմեական կայսրությունը:

V դարը Հայաստանի ու հայ ժողովրդի համար դարաշրջանների անցման սահմանագիծ է այն տեսակետից, որ այս դարի առաջին կեսին հայ ժողովուրդը կորցնում է իր անկախ պետականությունը և տևականորեն (չորս և կես դար) ընդհատվում է հայոց արքայական դինաստիաների պատմությունը: Դրանից հետո, ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացման արդյունքով, խորանում է նախարարական-ֆեոդալական մասնատվածությունը, ինչը դասականորեն արտահայտվել է աշխարհի շատ երկրներում:

Միաժամանակ, V դարը նշանավորվեց հայ քրիստոնյա ժողովրդի ազգային ոգին ու էությունն այնքան հատկանշող ազատագրական շարժումների սկզբնավորումով: Եվ վերջապես, նշված դարը հայտնի է որպես հայ մատենագրության «ոսկեդար»:

Գլուխ չորրորդ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ V-VI ԴԱՐԵՐՈՒՄ

## 1. Ազատագրական պայքարը 450-451 թթ.: Ավարայրի ճակատամարտը

**Պարսից արքունիքի վարած քաղաքականությունը Հայաստանում**

428 թ., Արշակունիների թագավորության վերացումից և Արևելյան Հայաստանը Պարսկաստանի գերիշխանության տակ ընկնելուց հետո, այնուամենայնիվ, պահպանվում էր երկրի ներքին ինքնուրույնությունը: Հազարապետության պաշտոնը գտնվում էր Ամատունիների, սպարապետությունը՝ Մամիկոնյանների, դատավարությունը՝ կաթողիկոսի ձեռքին և այլն:

Քանի դեռ Սասանյաններին սպառնում էին արևմուտքից՝ Բյուզանդիան, իսկ հյուսիսից՝ քուշանները և հոները, նրանք մի տեսակ հանդուրժող էին հայերի նկատմամբ: Սակայն, երբ Հազկերտ II-ի (438-457 թթ.) օրոք չեզոքացվում են այդ սպառնալիքները, սկսվում են հալածանքներն ու բռնությունները հայերի նկատմամբ: Հազկերտ արքան խնդիր է դնում վերացնել հայերի ներքին ինքնուրույնությունը, կրոնափոխ անել՝ պարտադրելով պարսից կրոնը՝ զրադաշտականությունը, և աստիճանաբար հայերին ձուլել պարսիկներին: Այդ քաղաքական ուղեգիծը վարում էր նաև դրացի Վրաստանի և Աղվանից աշխարհի նկատմամբ:

Այդ նպատակի իրականացման համար 447 թ. արտակարգ լիազորություններով Հայաստան է գալիս Դենշապուհ անունով մի պաշտոնյա: Խորամանկ այս կառավարիչը նախ զանազան մեքենա-

յություններով պառակտում և իրար դեմ է հանում հայ նախարարներին, իսկ հետո էլ անցկացնում է «աշխարհագիր» (մարդահամար)՝ հարկային բեռը էլ ավելի ծանրացնելու համար: Այդ քաղաքականությունը առաջ է բերում խոր դժգոհություն հասարակական լայն խավերի շրջանում: Կնշանակի՝ Հայաստանում բորբոքվող շարժումն իր հիմքում ուներ ոչ միայն կրոնափոխության ու ձուլման, այլ նաև ազգաբնակչության սոցիալ-տնտեսական կեղեքման ուժեղացման գործոններ: Հարկեր դրվեցին նաև հոգևորականության վրա, իսկ հայ նախարարները զրկվեցին իրենց ժառանգական իրավունքներից ու արտոնություններից: Մի խոսքով, հասարակական բոլոր խավերի մեջ առաջացավ համընդհանուր դժգոհություն:

449 թ. պարսից արքունիքի հատուկ հրովարտակով հայերին առաջարկվում էր հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել զրադաշտականություն: Նույնատիպ հրովարտակներ էին ուղարկվում նաև Վրաստան և Աղվանք:

Հայ նախարարները քաղաքական պայքարի հարցերում միասնական չէին: Նրանց մի մասը, սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, կողմնակից էր ապստամբության և Բյուզանդիայի օգնությամբ հայոց պետականության վերականգնմանը: Մյուս թևը, որը գլխավորում էր մարզպան Վասակ Սյունին, կողմ էր զգույշ ու լոյալ քաղաքականության՝ ձգտելով ձեռնպահ մնալ անհավասար գոտեմարտից:

**Ապստամբության սկիզբը և ընթացքը**

Հայ նախարարները մերժում են դավանափոխության առաջարկը: Զայրացած Հազկերտը մայրաքաղաք Տիզբոն է կանչում անվանի հայ նախարարներին: Պարսկաստան մեկնած նախարարները 450 թ. գարնանը ներկայանում են Հազկերտին: Վերջինս հանդիմանում է նրանց և առաջարկում հավատափոխություն: Նախարարները, այդ թվում սպարապետ Վարդան Մամիկոնյանը և մարզպան Վասակ Սյունին, ստիպված դիմում են կեղծ ուրացության և վերադառնում հայրենիք 700 մոգերի հետ միասին: Ապահովության համար Հազկերտը պատանդ է պահում Վասակ Սյունու երկու որդիներին: Հայ նախարարները և մոգերը հասնում են Բագրևանդի Անգղ կոչված ավանը: Սակայն ժողովուրդը, չհանդուրժելով դավանափոխությունը, Ղևոնդ Երեցի գլխավորությամբ ջարդում և Հայաստանից դուրս է քշում մոգերին: Անգղի դեպքերով, փաստորեն, սկսվում է

ապստամբությունը: Ռազմական դաշինք է կնքվում երեք բախտակից ժողովուրդների՝ հայերի, աղվանների և վրացիների միջև: Միաժամանակ, պատգամավորություն է ուղարկվում Բյուզանդիա օգնություն ստանալու հույսով: Սակայն կայսրը մերժում է հայերի խնդրանքը: Ավելին, նա պարսիկներին գաղտնի տեղեկացնում է հայերի՝ ապստամբության պատրաստվելու մասին: Հայերին մնում էր ապավինել իրենց սեփական ուժերին: Պարսկական գերիշխանության դեմ ապստամբում են նաև վրացիները և աղվանները:

Հայերը նախ օգնության են հասնում առաջինը ապստամբած աղվաններին: 450 թ. ամռանը սպարապետ Վարդան Մամիկոնյանի զորաբանակը թշնամուն հանդիպում է Խաղխաղ կոչվող բնակավայրի մոտ (ներկայիս Ղազախը) և շահում է այդ ճակատամարտը: Դրանից հետո հայկական զորախումբը, զարգացնելով հաջողությունը, հասնում է մինչև Ճորա պահակ (ներկայիս՝ Դերբենդ) և փոխօգնության դաշն կնքում հոների հետ՝ ընդդեմ պարսիկների: Մինչ Վարդան Մամիկոնյանը զբաղված էր Աղվանքում, սուրհանդակը լուր է բերում Վասակ Սյունու որդեգրած նոր քաղաքականության մասին: Մարզպանը փոխում է իր վերաբերմունքը ապստամբության նկատմամբ և սկսում վարել երկդիմի քաղաքականություն: Նրա վերաբերմունքը փոխվեց այն բանից հետո, երբ Բյուզանդիան հրաժարվեց օգնել Հայաստանին: Ստանալով այս անհանգստացնող լուրը՝ Վարդանը անմիջապես վերադառնում է Հայաստան: Ապստամբության ընթացքը կասեցնել այլևս անհնար էր:

**Ավարայրի ճակատամարտը**

450-451 թթ. ձմռանը նախապատրաստվում էր վճռական գոտեմարտ: Գարունը բացվելուն պես պարսկական բանակը, Մուշկան Նիսալավուրտի հրամանատարությամբ, Հեր և Զարեվանդ գավառներով մտավ Արտազ գավառ և բանակեց Տղմուտ գետի աջ ափին՝ Ավարայրի դաշտում: Հայկական 66 հազարանոց բանակը այնքան էլ լավ չէր զինված: Սակայն ոտքի էին ելել բոլոր խավերը, այդ թվում՝ հոգևորականները: Ապստամբության նշանաբանն էր. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»: Ճակատամարտը տեղի ունեցավ 451 թ. մայիսի 26-ին: Ճակատամարտին ականատես ու մասնակից հոգևորական-պատմիչ Եղիշեն գեղարվեստական բացառիկ վարպետությամբ նկարագրել է այն: Հակառակորդը, բացի մեծաքիվ բանակից, կռվի մեջ էր մտցրել նաև վարժեցրած փղերի: Մարտը տևեց

մինչև երեկո: Հերոսի մահով ընկավ հայոց զորքերի հրամանատար, սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Երկու կողմերն էլ ծանր կորուստներ կրեցին: Ճակատամարտից հետո հայերը նահանջեցին և շարունակեցին իրենց պայքարը պարտիզանական կռիվների ձևով:

Ծանր ճակատամարտի և սկսված պարտիզանական կռիվների պատճառով պարսկական արքունիքը, հարկադրված, բանակը հետ է կանչում Հայաստանից և հայերի նկատմամբ սկսում է վարել ավելի մեղմ, սիրաշահելու քաղաքականություն: Հազկերտը ստիպված հետ է կանգնում հայերին կրոնափոխ անելու մտադրությունից, չափավորում է հարկերն ու տուրքերը, նշանակում է նոր մարզպան և այլն:

«Վարդանանց» կոչվող այս պատերազմը հայ ազատագրական պայքարի պատմության փայլուն էջերից է: Հայ ժողովուրդը մինչև օրս մեծ ակնածանքով է հիշում Վարդան Մամիկոնյանի և նրա զինակիցների հայրենասիրական սխրանքը:

## 2. Ազատագրական կռիվները Հայաստանում 481-484 թթ.

**Ազատագրական պայքարի սկիզբը և ընթացքը**

Ավարայրի ճակատամարտից հետո պարսիկների վարած մեղմ քաղաքականությունը երկար չտևեց: Շուտով Պերոզ արքայի օրոք, վերսկսվեց բռնությունների և հավատափոխության քաղաքականությունը: Նորից հայ ժողովրդի գլխին կախվեց ձուլման վտանգը: Եվ 481 թ., Ավարայրի ճակատամարտից ուղիղ 30 տարի անց, մարզպանական Հայաստանում բռնկվեց մի նոր ապստամբություն: Այս անգամ առաջինը ապստամբեց Վրաստանը Վախթանգ Գորգասալ թագավորի գլխավորությամբ: Ստեղծվեց հայ-վրացական դաշինք՝ միասնական պայքարով ազատագրվելու պարսիկների գերիշխանությունից:

Հայաստանում ապստամբությունը գլխավորեց Վարդան Մամիկոնյանի եղբորորդին՝ Վահան Մամիկոնյանը: Պարսիկ պաշտոնյաները դուրս քշվեցին Հայաստանից: Երկրի սպարապետ նշանակվեց Վահան Մամիկոնյանը, իսկ մարզպան՝ Սահակ Բագրատունին: Ապստամբության կենտրոն դարձավ մայրաքաղաք Դվինը: Այս անգամ էլ Բյուզանդիան չօգնեց հայերին: Հայ իշխանների մեծ մասը (Մամիկոնյաններ, Բագրատունիներ, Կամսարականներ, Արծրունիներ, Գնունի-

ներ, Ռշտունիներ, Մանդակունիներ և այլք) հարում է ապստամբությանը, իսկ մի քանիսն էլ, ունենալով պարսկական կողմնորոշում, ցուցաբերում են դավաճանական վարքագիծ: Վերջիններիս թվում էին Գադիշո Խոռխոռունին, Գդիհոն Սյունին և ուրիշներ: Այս ապստամբության մասին մեզ առատ տեղեկություններ է տալիս այդ ժամանակների պատմիչ Ղազար Փարպեցին իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ:

481 թ. հայկական զինված ուժերը փայլուն հաղթանակ են տանում Մասիսի ստորոտում՝ Ակոռի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Հաջորդ տարի՝ 482 թ., հայերը մի նոր հաղթանակ են տանում Ավարայրից ոչ հեռու, Արտազ գավառի Ներսեհապատ գյուղի մոտ: Հայկական զորաբանակը, Վահան Մամիկոնյանի ընդհանուր հրամանատարությամբ, մեծ քաջագործություններով հաղթում է պարսկական մեծաթիվ զորքերին ու փախուստի մատնում:

Ներսեհապատի ճակատամարտից շատ չանցած, Վրաստանի Վախթանգ թագավորը օգնություն է խնդրում հայերից: Վահան Մամիկոնյանը, կատարելով իր դաշնակցային պարտավորությունը, հայոց բանակի գլուխն անցած շարժվում է Վրաստան: 482 թ. ամռանը հայ-վրացական զորքերը Կուր գետի ափին՝ Ճարմանայի դաշտում, ճակատամարտ են տալիս պարսկական բանակին: Սա հայերի երրորդ մեծ ճակատամարտն էր: Սակայն այս ճակատամարտում հայ-վրացական միացյալ ուժերը ծանր պարտություն կրեցին: Կռվում զոհվեց մարզպան Սահակ Բագրատունին:

Ճակատամարտից հետո Վահան Մամիկոնյանը վերադառնում է Հայաստան և իր փոքրաթիվ ուժերով սկսում պարտիզանական կռիվները: Նա մեծ աջակցություն է ստանում ժողովրդի կողմից: Սպարապետ Վահան Մամիկոնյանը թշնամու աչքին դառնում է առասպելական հերոս: Ազատագրական պայքարը շարունակվում է մինչև 484 թ. ամռանը: Շուտով իրադրությունը փոխվում է:

**Նվարսակի հաշտության պայմանագիրը**

484 թ. ամռանը պարսիկները պարտություն կրեցին միջինասիական քոչվոր ցեղերի (հեփթաղների) դեմ կռիվներում: Սպանվեց պարսից Պերոզ թագավորը:

Մի կողմից՝ ծանր պարտությունը, մյուս կողմից՝ Վահան Մամիկոնյանի գլխավորած պարտիզանական կռիվները հարկադրեցին պարսկական արքունիքին կրկին վարել մեղմ քաղաքականություն Հայաս-

տանի նկատմամբ: Այդ նպատակով Հեր գավառի Նվարսակ գյուղում (հայ-պարսկական սահմանագլխին) կնքվեց հաշտության պայմանագիր (484 թ.): Համաձայն պայմանագրի, Պարսկաստանը հրաժարվում էր կրոնափոխության ծրագրից: Պարսից արքունիքը այլևս չպետք է միջամտեր հայ նախարարների ներքին գործերին: Հայաստանը պարտավորվում էր հայոց այրուձին դնել պարսից արքայի տրամադրության տակ:

485 թ. Վահան Մամիկոնյանը մեկնում է Տիզբոն, որտեղ պարսից նոր արքա Վաղարշը նրան ընդունում է մեծ պատիվներով: Մայրաքաղաք Տիզբոնում մեկ անգամ ևս վավերացվում է Նվարսակի հաշտության պայմանագիրը, իսկ Վաղարշի հատուկ հրովարտակով Վահան Մամիկոնյանին տրվում են Հայոց սպարապետի ու տանուտերի պաշտոններ: Հայաստանը, փաստորեն, դառնում է կիսանկախ «տանուտիրական երկիր», իսկ Դվինը՝ նրա մայրաքաղաքը: Հայերի համակրանքը շահելու նպատակով՝ շուտով սպարապետ Վահան Մամիկոնյանը նշանակվում է նաև Հայաստանի մարզպան (կառավարիչ):

Տևական պայքարից հետո կրկին վերականգնվում է նախարարների ու հոգևորականության արտոնյալ վիճակը, քրիստոնեությունը ճանաչվում որպես Հայաստանի պետական կրոն:

Այսպիսով, 481-484 թթ. ազատագրական կռիվներն ունեցան հաղթական ավարտ: Համառ պայքարի գնով Հայաստանը պահպանեց իր ներքին քաղաքական ինքնուրույնությունը: Շնորհիվ V դարի ազատագրական շարժումների՝ ձախողվեցին Հայաստանը Պարսկաստանին կցելու և հայ ժողովրդին կրոնափոխելով ձուլելու պարսկական արքունիքի փորձերը:

## 3. Հայաստանը VI դարում: Հայաստանի երկրորդ բաժանումը

**Բյուզանդիայի ճաղաքականությունը Արևմտյան Հայաստանում**

Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) և անկախ պետականության վերացումից հետո թե՛ Պարսկաստանը և թե՛ Բյուզանդիան (Արևելյան հռոմեական կայսրությունը) ուզում էին վերջ տալ հայ նախարարների ներքին ինքնուրույնությանը: Երկու տերություններն էլ վարում էին ձուլման քաղաքականություն: Եթե Պարսկաստանը այդ քաղաքականությու-

նը իրականացնում էր բացահայտ, ապա Բյուզանդիան դա կատարում էր քողարկված ձևով: Վերջինիս՝ ձուլման ու հայաքափման քաղաքականությունը ցայտուն դրսևորվեց Հուստինիանոս I կայսեր օրոք (527-565), որն իրականացրեց մի շարք վերափոխություններ:

Նա որոշեց իր գերիշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում մտցնել բյուզանդական օրենքներ ու իրավական նորմեր, քայքայել ու փոշիացնել հայ նախարարական իշխանությունները: Նոր օրենքով նախարարական ընտանիքներում այդուհետ տղամարդկանց հետ համահավասար ժառանգական իրավունք էին ստանում նաև կանայք: Սա խարխլում էր հայ նախարարական տների ամբողջականությունը, միասնությունը և հզորությունը: Վատթարանում է նաև գյուղացիության դրությունը:

Բացի այդ, Հուստինիանոս I-ը երկրում կատարեց վարչական փոփոխություններ: Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերը (նահանգները) բաժանվեցին չորս մասի և ստացան 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ Հայք անվանումները: Դրանց կառավարիչներ նշանակվեցին բյուզանդական պաշտոնյաներ: Ռազմական տեսակետից Արևմտյան Հայաստանի այդ չորս մասերը մտնում էին մի մագիստրոսության մեջ, որի կենտրոնը համարվում էր Թեոդոսուպոլիս (Կարին) քաղաքը: Հուստինիանոսի ռազմավարչական ռեֆորմը ևս նպատակ էր հետապնդում թուլացնել հայերի ռազմական ինքնուրույնությունը:

Հուստինիանոսի վարչատնտեսական ու ռազմական վերափոխություններն այնքան մեծ դժգոհություն առաջացրին հայերի մեջ, որ հայ իշխանները նույնիսկ մտադրվեցին սպանել կայսրին: Սակայն մի հույն պալատականի մատնությամբ այդ դավադրությունը ձախողվեց:

**Քաղկեդոնի ժողովը**

451 թ. փոքրասիական Քաղկեդոն քաղաքում հրավիրվեց համաքրիստոնեական տիեզերական ժողով: Ժողովում կրոնադավանաբանական վեճ ծագեց Քրիստոսի բնության (էության) հարցում: Ժողովականների մեծամասնությունը, բյուզանդական արքունիքի և եկեղեցու թելադրանքով, Քրիստոսի մեջ ճանաչում են երկու բնություն՝ աստվածային ու մարդկային: Հետագայում այս տեսակետի կողմնակիցները կոչվեցին երկաբնակներ («դիոֆիզիտներ») կամ քաղկեդոնականներ: Իսկ ժողովի մասնակիցների փոքրամասնությունը, ընդունելով Քրիստո-

սի միայն աստվածային բնույթը, կոչվեց միաբնակներ («մոնոֆիզիտներ») կամ հակաքաղկեդոնականներ:

Բյուզանդական կայսրության համար պաշտոնական դավանանք է ճանաչվում երկաբնակությունը՝ քաղկեդոնականությունը՝ որպես «ուղղափառ», ճշմարիտ ուղղություն, իսկ հակաքաղկեդոնականությունը՝ հերձված:

Թեև հայերը, 450-451 թթ. հայտնի ապստամբական իրավիճակի պատճառով, չկարողացան մասնակցել Քաղկեդոնի տիեզերական ժողովին, սակայն կայսրության արևելյան մյուս ժողովուրդնե աստրիների, ղպտիների նման հարեցին միաբնակների (հակաքաղկեդոնական) չափավոր թևին:

Միաբնակների և երկաբնակների միջև մղվող կրոնադավանաբանական այս վեճի տակ, անշուշտ, թաքնված էր քաղաքական պայքար, մի կողմից՝ Բյուզանդիայի, իսկ մյուս կողմից՝ Պարսկաստանի միջև, որովհետև երկուսն էլ ձգտում էին Արևելքի երկրներին ու ժողովուրդներին իրենց ազդեցության ու գերիշխանության տակ առնել, իսկ եկեղեցին, կրոնը կարևոր միջոց էին այդ ճանապարհին: Պետք է ասել, որ կրոնադավանաբանական այդ պայքարում Պարսկաստանը, ելնելով իր շահերից, բնականաբար, հովանավորում էր հակաքաղկեդոնականներին (նեստորականությունը): Միաժամանակ, անսքող դիմակայություն կար նաև, մի կողմից՝ կայսրության արևելյան հպատակ ժողովուրդների, իսկ մյուս կողմից Բյուզանդական արքունիքի ու պաշտոնական եկեղեցու միջև:

Այդ պայքարի արդյունքով՝ 554 թ. Դվինի եկեղեցական ժողովով հայ եկեղեցին վերջնականապես իր կապերը խզեց Բյուզանդական քաղկեդոնական եկեղեցուց: Ժողովը մերժեց նաև հակաքաղկեդոնականությունը՝ որպես նեստորականություն: Հայկական առաքելական, լուսավորչական եկեղեցին գնալով ավելի ու ավելի էր ստանում ազգային դիմագիծ, կապվում ժողովրդի, հայ կյանքի ու ազգային խնդիրների հետ: Սկսած VI դարից՝ հայոց եկեղեցին դառնում է անկախ և ինքնուրույն թե՛ քաղկեդոնականությունից և թե՛ հակաքաղկեդոնականությունից:

**571-572 թթ. ապստամբությունը**

VI դարում վիճակը բարվոք չէր նաև Հայաստանի պարսկական մասում Արևելյան Հայաստանում: VI դ. կեսերից մարզպանության պաշտոնը կրկին անցավ

պարսիկների ձեռքը: Հայաստանում անցկացվեց նոր «աշխարհագիր» և ծանրացվեցին հարկերը: Կրկին ասպարեզ նետվեցին կրոնական հալածանքները (կրոնափոխությունը), հայ իշխանների իրավունքների ոտնահարումը: Այս ամենի պատճառով 571 թ. պարսից տիրապետության դեմ սկսվեց մի նոր ապստամբություն: Ապստամբությունը գլխավորեց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որը հայտնի է Կարմիր Վարդան մականունով: Ստեղծվում է 20-հազարանոց բանակ: Ապստամբները հարձակվում են Դվինում տեղակայված պարսկական կայազորի վրա, ջախջախում այն և սպանում պարսից Սուրեն մարզպանին: Ապստամբության դրոշ են պարզում նաև վրացիները և աղվանները:

Այս ապստամբության ժամանակ Բյուզանդիան, իր նվաճողական շահերից ելնելով, հովանավորում է հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների ելույթները: Կայսրը հաստատապես խոստանում է օգնել հայերին՝ հայկական առանձին շրջաններ Բյուզանդիայի գերիշխանությանը ենթարկելու պայմանով: Միաժամանակ, կայսրը ձգտում էր հայերին ենթարկել հունադավան (քաղկեդոնական) եկեղեցուն: Դրա հիման վրա կրկին բռնկվեց պարսկա-բյուզանդական պատերազմը, որը փոփոխական հաջողություններով շարունակվեց 20 տարի: Ռազմական գործողությունները ընթանում էին Հայաստանի տարածքում, և դրանց հետևանքով ամենից ավելի տուժողը հայերն էին:

**Հայաստանի երկրորդ բաժանումը**

Երկար կռիվներից ու բանակցություններից հետո երկու տերությունները համաձայնության եկան և 591 թ. կնքված հաշտությամբ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Ըստ նոր բաժանման, Բյուզանդիային անցավ Հայաստանի մեծ մասը, այդ թվում Տայքը, Տուրուբերանը, Աղձնիքը և Այրարատ նահանգի մեծ մասը: Դրա հետևանքով ավելի խորացավ Հայաստանի քաղաքական մասնատվածությունը:

Այս ժամանակաշրջանի վերաբերյալ հայտնի է բյուզանդական Մորիկ կայսեր (582-602 թթ.) նամակը՝ ուղղված պարսից Խոսրով II թագավորին, որը մեջ է բերել Սեբեոս պատմիչը: VII դարում կրկին շարունակվեցին պարսկա-բյուզանդական հակամարտությունները և չդադարող պատերազմները, մինչև որ տարածաշրջանում պատմական ասպարեզ մտավ մի նոր ախոյան՝ Արաբական խալիֆայությունը: